ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ[1]

Աշոտ Մարկոսյան[*]

2.2 Սեփականության իրավունքի միջազգային ինդեքսների հաշվարկման արդյունքները

Կատարված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ սեփականության իրավունքի պաշտպանվածությունը և երկրի տնտեսական ներուժը սերտորեն կապված են միմյանց հետ: Սեփականության իրավունքի լավագույն պաշտպանվածություն ունեցող երկրներում ապահովվում է աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն: Ուսումնասիրված երկրներում մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքն ամենաբարձր քվինթիլում (20%-ում) 2008թ. ավելի քան 9 անգամ բարձր է, քան վատ պաշտպանված մասնավոր սեփականության իրավունք ունեցող երկրներում (*Աղյուսակ 1*):

Աղյուսակ 1

Սեփականության իրավունքի պաշտպանության և երկրի արտադրողականության միջև կապը 2008 թվականին [14]

Կարգն ըստ սեփականության իրավունքի միջազգային ինդեքսի	Բնակչության մեկ շնչի հաշվով միջին համախառն ներքին արդյունքը (ԱՄՆ դոլար)
Լավագույն քվինթիլը	39 991
Երկրորդ քվինթիլը	23 982
Երրորդ քվինթիլը	11 748
Չորրորդ քվինթիլը	4 891
Վատագույն քվինթիլը	4 341

[1] Սկիզբը՝ նախորդ համարում:

[*] Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ:

Ակնհայտ է, որ այստեղ խոսքը ոչ թե ուղղակի պատճառահետևանքային կապերի մասին է, որքան այն հարաբերությունների, որոնք մասնակիորեն հայտնաբերվել են հենց հակադարձ պատճառահետևանքային կապերի միջոցով: Ասվածը երևում է հատկապես մտավոր սեփականության պաշտպանության դեպքում, որը կարևոր նշանակություն ունի առանձնապես բարձր զարգացած երկրներում: Այս երկրներում, ի տարբերություն աղքատ կամ զարգացող երկրների, ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցումն իրականացվում են, սովորաբար, արտոնագրերով պաշտպանված առաջադիմական տեխնոլոգիաների հիման վրա:

Գծապատկեր 1

Գնողունակության համարժեքով հաշվարկված (2005թ. $) մեկ շնչի հաշվով միջին ՀՆԱ-ի և ՍԻՄԻ-ի միջև գոյություն ունեցող կապը



Աղբյուրը՝ *International Property Rights Index, 2010 Report, p. 41.*

Գծապատկեր 1-ում բերված է մեկ շնչի հաշվով ՀՆԱ միջին ցուցանիշի և սեփականության իրավունքի միջազգային ինդեքսի միջև գոյություն ունեցող կապը: Բերված ցուցանիշների վատթարությունը բացատրվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամով, որը զգալիորեն նվազեցրեց տնտեսական աճի տեմպը, ինչի հետևանքով բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշի անկում արձանագրվեց:

Գծապատկեր 1-ից երևում է, որ սեփականության իրավունքի լավագույն պաշտպանվածություն ունեցող 20% երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ միջին ցուցանիշն 8 անգամ ավելի բարձր է, քան վատագույն 20%-ը կազմող երկրներում: *Գծապատկեր 1*-ի հաշվարկները կատարվել են 2007-2010 թվականների ՍԻՄԻ միջին տվյալների հիման վրա, դրանք թղթակցվել են 2005-2008 թվականների մեկ շնչի հաշվով ՀՆԱ միջին ցուցանիշների հետ: Վերջիններս հաշվարկվել են՝ ելնելով գնողունակության համարժեքից: Նշված ցուցանիշները վկայում են, որ գոյություն ունի սերտ կապ ինչպես մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, այնպես էլ եկամտի ցուցանիշի և սեփականության իրավունքի ցուցանիշների միջև: Նման պատկեր է ստացվում, երբ հաշվարկվում է ըստ առանձին տարիների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և սեփականության իրավունքի պաշտպանության միջև գոյություն ունեցող կապը:

Վերը բերված շարադրանքից պարզ է, որ սեփականության իրավունքի միջազգային ինդեքսի մեծությունը ձևավորվում է երեք բաղադրիչների՝ իրավական և քաղաքական միջավայրի, սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների և մտավոր սեփականության իրավունքների գումարից: Ինդեքսի ամենամեծ արժեքը 10 միավորն է:

Աղյուսակ 2-ում աշխարհի 125 երկրները, որոնց վերաբերյալ ուսումնասիրություն է կատարված, դասավորված են ըստ ՍԻՄԻ ցուցանիշի մեծության՝ առավելագույնից մինչև նվազագույնը, իսկ *Աղյուսակ 3*-ում ներկայացված են ուսումնասիրվող երկրների ՍԻՄԻ ցուցանիշները և դրա բաղադրիչները:

Աղյուսակ 4-ում բերված է աշխարհի ՍԻՄԻ ամենամեծ արժեքներ ունեցող 10 երկրների ցանկը՝ ըստ բաղադրիչների:

Աղյուսակ 5-ում բերված է ՍԻՄԻ ամենափոքր արժեքներ ունեցող 10 երկրների ցանկը՝ ըստ բաղկացուցիչների:

Աղյուսակ 2

Երկրների դասավորությունն ըստ ՍԻՄԻ ցուցանիշի մեծության [6, p. 28]

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	ՍԻՄԻ միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	ՍԻՄԻ միավորը
1	Ֆինլանդիա	8.6		64	Բրազիլիա	5.1
2	Դանիա	8.5		64	Չինաստան	5.1
2	Շվեդիա	8.5		64	Մարոկո	5.1
4	Նիդեռլանդներ	8.4		67	Եգիպտոս	5.0
5	Նորվեգիա	8.3		68	Կոլումբիա	5.0
6	Շվեյցարիա	8.3		69	Սիրիա	4.9
7	Նոր Զելանդիա	8.3		69	Խորվաթիա	4.9
8	Սինգապուր	8.2		71	Էլ Սալվադոր	4.8
8	Ավստրալիա	8.2		72	Մալի	4.7
8	Ավստրիա	8.2		72	Մեքսիկա	4.7
11	Լյուքսեմբուրգ	8.1		72	Մալավի	4.7
12	Գերմանիա	8.0		75	Բուրկինա Ֆասո	4.6
12	Կանադա	8.0		76	Բենին	4.6
12	Իռլանդիա	8.0		75	Շրի Լանկա	4.6
15	ԱՄՆ	7.9		75	Հոնդուրաս	4.6
16	Իսլանդիա	7.8		75	Տանզանիա	4.8
17	Միացյալ Թագավորություն	7.8		80	Ֆիլիպիններ	4.5
18	Ճապոնիա	7.6		80	Վիետնամ	4.5
19	Հոնկոնգ	7.5		80	Զամբիա	4.5
20	Բելգիա	7.5		80	Չեռնոգորիա	4.5
21	Ֆրանսիա	7.2		84	Մավրիտանիա	4.4
22	Արաբական Միացյալ Էմիրություններ	7.1		84	Դոմինիկյան Հանրապետություն	4.4
23	Պորտուգալիա	7.0		84	Մոլդովա	4.4
24	Հարավային Աֆրիկա	6.8		84	Արգենտինա	4.4
25	Իսպանիա	6.8		88	Պերու	4.3
26	Կատար	6.8		88	Ղազախստան	4.3
27	Հարավային Կորեա	6.8		88	Գվատեմալա	4.3
28	Թայվան	6.8		88	Քենիա	4.3
29	Էստոնիա	6.7		88	Ռուսաստան	4.3
30	Մալթա	6.6		88	Բրունեյ	4.3

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	ՍԻՄԻ միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	ՍԻՄԻ միավորը
31	Կիպրոս	6.6		88	Մադագասկար	4.3
32	Օման	6.5		95	Սենեգալ	4.2
33	Հունգարիա	6.5		95	Մոզամբիկ	4.2
34	Չիլի	6.4		97	Ուկրաինա	4.1
35	Սլովակիա	6.4		97	Ղրղզստան	4.1
36	Պուերտո Ռիկո	6.3		97	Ինդոնեզիա	4.1
37	Իսրայել	6.3		97	Մակեդոնիա	4.1
38	Չեխիա	6.2		101	Նեպալ	4.0
39	Բահրեյն	6.2		101	Ադրբեջան	4.0
40	Լիտվա	6.2		101	Եթովպիա	4.0
41	Հորդանան	6.1		104	Ուգանդա	3.9
42	Սաուդյան Արաբիա	6.1		104	Սերբիա	3.9
43	Մալայզիա	6.1		104	Էկվադոր	3.9
44	Իտալիա	6.0		104	Պակիստան	3.9
45	Բոթսվանա	6.0		104	Գվիանա	3.9
46	Հունաստան	5.9		109	Հայաստան	3.8
47	Մավրիտիուս	5.9		109	Կամերուն	3.8
48	Թունիս	6.9		109	Ալբանիա	3.8
49	Քուվեյթ	5.8		109	Նիգերիա	3.8
50	Կոստա Ռիկա	5.7		113	Վրաստան	3.7
51	Ուրուգվայ	5.7		113	Ալժիր	3.7
52	Սլովենիա	5.6		115	Լիբիա	3.7
53	Լեհաստան	5.5		116	Բոսնիա և Հերցեգովինա	3.6
54	Հնդկաստան	5.5		116	Նիկարագուա	3.6
55	Լատվիա	5.4		118	Պարագվայ	3.5
56	Պանամա	5.4		119	Բոլիվիա	3.4
57	Ռումինիա	5.4		120	Բուրունդի	3.3
58	Յամայկա	5.3		121	Չադ	3.2
59	Բուլղարիա	5.2		121	Զիմբաբվե	3.2
59	Թուրքիա	5.2		121	Վենեսուելա	3.2
59	Տրինիդադ և Տոբագո	5.2		124	Փղոսկրե ափ	3.1
59	Գանա	5.2		125	Բանգլադեշ	2.9
59	Թաիլանդ	5.2			**Միջինը**	**5.5**

Աղյուսակ 3

ՍԻՄԻ և դրա բաղկացուցիչների մեծություններն ըստ աշխարհի երկրների [6, p. 29]

Հ/Հ	Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
1	Ալբանիա	3.8	3.8	5.2	2.3
2	Ալժիր	3.7	3.5	4.3	3.4
3	Արգենտինա	4.4	3.7	4.7	4.7
4	Հայաստան	3.8	3.8	5.8	1.9
5	Ավստրալիա	8.2	8.5	8.1	8.0
6	Ավստրիա	8.2	8.4	7.8	8.3
7	Ադրբեջան	4.0	3.6	5.7	2.6
8	Բահրեյն	6.2	5.7	7.4	5.5
9	Բանգլադեշ	2.9	3.0	3.7	2.1
10	Բելգիա	7.5	7.4	6.9	8.1
11	Բենին	4.6	4.6	4.7	4.7
12	Բոլիվիա	3.4	3.0	4.0	3.4
13	Բոսնիա և Հերցեգովինա	3.6	3.8	4.4	2.7
14	Բոթսվանա	6.0	6.9	6.9	4.3
15	Բրազիլիա	5.1	4.7	5.4	5.2
16	Բրունեյ	4.3	6.3	3.4	3.2
17	Բուլղարիա	5.2	4.6	6.0	5.1
18	Բուրկինա Ֆասո	4.6	4.3	4.6	5.0
19	Բուրունդի	3.3	2.5	4.3	3.1
20	Կամերուն	3.8	3.0	4.6	3.8
21	Կանադա	8.0	8.4	7.8	7.9
22	Չադ	3.2	1.6	4.2	3.9
23	Չիլի	6.4	6.8	7.0	5.4
24	Չինաստան	5.1	4.4	6.1	4.8
25	Կոլումբիա	5.0	3.8	5.9	5.3
26	Կոստա Ռիկա	5.7	6.3	6.1	4.7
27	Հունաստան	4.9	5.1	5.1	4.5
28	Կիպրոս	6.6	6.9	6.8	6.0
29	Չեխիա	6.2	6.1	6.0	6.6
30	Դանիա	8.5	8.7	8.3	8.5
31	Դոմինիկյան Հանրապետություն	4.4	4.0	5.2	3.9
32	Էկվադոր	3.9	2.7	4.5	4.4
33	Եգիպտոս	5.0	4.7	5.7	4.7
34	Էլ Սալվադոր	4.8	4.3	6.0	4.0
35	Էստոնիա	6.7	6.8	7.5	5.6
36	Եթովպիա	4.0	3.1	4.8	4.0

Հ/Հ	Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
37	Ֆինլանդիա	8.6	8.9	8.6	8.5
38	Ֆրանսիա	7.2	7.2	6.5	7.9
39	Վրաստան	3.7	3.7	5.8	1.8
40	Գերմանիա	8.0	8.3	7.5	8.2
41	Գանա	5.2	4.9	5.5	5.2
42	Հունաստան	5.9	5.6	6.2	6.0
43	Գվատեմալա	4.3	3.5	5.7	3.7
44	Գվիանա	3.9	3.7	5.2	2.7
45	Հոնդուրաս	4.6	3.6	5.9	4.2
46	Հոնկոնգ	7.5	8.1	7.8	6.7
47	Հունգարիա	6.5	6.1	6.6	6.7
48	Իսլանդիա	7.8	8.5	8.1	6.9
49	Հնդկաստան	5.5	4.8	6.6	5.3
50	Ինդոնեզիա	4.1	3.7	5.5	3.2
51	Իռլանդիա	8.0	8.3	7.8	7.9
52	Իսրայել	6.3	5.9	6.2	6.9
53	Իտալիա	6.0	5.3	5.7	7.1
54	Փղոսկրե ափ	3.1	1.7	4.3	3.3
55	Յամայկա	5.3	4.6	5.9	5.5
56	Ճապոնիա	7.6	7.4	7.1	8.3
57	Հորդանան	6.1	5.7	6.9	5.7
58	Ղազախստան	4.3	4.0	5.8	3.1
59	Քենիա	4.3	3.0	6.0	4.0
60	Հարավային Կորեա	6.8	6.1	7.2	7.0
61	Քուվեյթ	5.8	6.3	7.0	4.1
62	Ղրղզստան	4.1	2.8	5.2	4.4
63	Լատվիա	5.4	5.6	6.3	4.4
64	Լիբանան	3.7	4.6	4.0	2.4
65	Լիտվա	6.2	5.7	6.9	5.9
66	Լյուքսեմբուրգ	8.1	8.5	7.8	8.0
67	Մակեդոնիա	4.1	4.1	5.0	3.1
68	Մադագասկար	4.3	4.1	4.8	3.9
69	Մալավի	4.7	5.0	5.1	3.9
70	Մալայզիա	6.1	5.7	6.7	5.8
71	Մալի	4.7	4.4	5.1	4.8
72	Մալթա	6.6	7.5	6.4	6.0
73	Մավրիտանիա	4.4	3.3	5.2	4.7
74	Մավրիտիուս	5.9	6.6	6.4	4.9

Հ/Հ	Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
75	Մեքսիկա	4.7	4.0	5.3	4.9
76	Մոլդովա	4.4	3.8	5.2	4.1
77	Չեռնոգորիա	4.5	4.9	6.2	2.4
78	Մարոկո	5.1	4.5	5.9	4.8
79	Մոզամբիկ	4.2	4.2	4.6	3.8
80	Նեպալ	4.0	3.1	5.5	3.5
81	Նիդեռլանդներ	8.4	8.5	8.5	8.2
82	Նոր Զելանդիա	8.3	8.8	8.2	7.9
83	Նիկարագուա	3.6	3.0	4.3	3.6
84	Նիգերիա	3.8	3.1	4.5	3.8
85	Նորվեգիա	8.3	8.5	8.6	7.9
86	Օման	6.5	6.7	7.6	5.2
87	Պակիստան	3.9	2.5	5.8	3.3
88	Պանամա	5.4	4.3	6.9	5.0
89	Պարագվայ	3.5	2.6	4.7	3.1
90	Պերու	4.3	3.6	5.8	3.6
91	Ֆիլիպիններ	4.5	3.5	5.4	4.8
92	Լեհաստան	5.5	5.7	4.8	6.1
93	Պորտուգալիա	7.0	7.1	6.9	7.0
94	Պուերտո Ռիկո	6.3	6.2	6.2	6.7
95	Կատար	6.8	7.2	7.3	5.9
96	Ռումինիա	5.4	4.8	5.6	5.8
97	Ռուսաստան	4.3	3.3	5.0	4.6
98	Սաուդյան Արաբիա	6.1	5.4	7.3	5.5
99	Սենեգալ	4.2	4.0	4.6	4.1
100	Սերբիա	3.9	4.0	4.8	2.8
101	Սինգապուր	8.2	8.5	8.3	7.9
102	Սլովակիա	6.4	5.8	7.1	6.2
103	Սլովենիա	5.6	6.5	4.7	5.5
104	Հարավային Աֆրիկա	6.8	5.7	7.4	7.4
105	Իսպանիա	6.8	6.3	6.9	7.2
106	Շրի Լանկա	4.6	4.0	6.0	3.9
107	Շվեդիա	8.5	8.7	8.5	8.3
108	Շվեյցարիա	8.3	8.7	7.9	8.3
109	Սիրիա	4.9	3.8	6.5	4.5
110	Թայվան	6.8	6.3	7.3	6.7
111	Տանզանիա	4.6	4.6	4.9	4.2
112	Թաիլանդ	5.2	4.4	6.9	4.3

Հ/Հ	Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
113	Տրինիդադ և Տոբագո	5.2	4.7	5.4	5.6
114	Թունիս	5.9	5.7	7.0	4.9
115	Թուրքիա	5.2	4.7	6.0	5.0
116	Ուգանդա	3.9	3.6	3.6	4.4
117	Ուկրաինա	4.1	3.7	4.8	3.9
118	Միացյալ Արաբական Էմիրություններ	7.1	6.8	7.7	6.7
119	Միացյալ Թագավորություն	7.8	7.8	7.7	7.9
120	ԱՄՆ	7.9	7.5	7.8	8.5
121	Ուրուգվայ	5.7	6.7	5.4	4.9
122	Վենեսուելա	3.2	1.9	4.4	3.2
123	Վիետնամ	4.5	4.4	5.7	3.5
124	Զամբիա	4.5	4.4	5.8	3.3
125	Զիմբաբվե	3.2	1.8	4.7	3.1
	Միջինը	**5.45**	**5.20**	**6.04**	**5.13**

Աղյուսակ 4

ՍԻՄԻ ամենամեծ արժեքներ ունեցող աշխարհի 10 երկրները, ըստ դրա բաղադրիչների (ընդհանուր շարքում զբաղեցրած տեղերը և միավորները)

ՍԻՄԻ			ԻՔՄ			ՍՖԻ			ՄՄԻ		
Երկիրը	Տեղը	Միավորը	Երկիրը	Տեղը	Միավորը	Երկիրը	Տեղը	Միավորը	Երկիրը	Տեղը	Միավորը
Ֆինլանդիա	1	8.6	Ֆինլանդիա	1	8.9	Նորվեգիա	1	8.6	Դանիա	1	8.5
Դանիա	2	8.5	Նոր Զելանդիա	2	8.8	Ֆինլանդիա	1	8.6	Ֆինլանդիա	1	8.5
Շվեդիա	2	8.5	Շվեդիա	3	8.7	Շվեդիա	3	8.5	ԱՄՆ	1	8.5
Նիդեռլանդ-ներ	4	8.4	Դանիա	3	8.7	Նիդեռլանդներ	3	8.5	Ճապոնիա	4	8.3
Նորվեգիա	5	8.3	Շվեյցարիա	5	8.7	Դանիա	5	8.3	Շվեյցարիա	4	8.3
Շվեյցարիա	5	8.3	Իսլանդիա	6	8.5	Սինգապուր	5	8.3	Ավստրիա	4	8.3
Նոր Զելանդիա	5	8.3	Նիդեռլանդներ	6	8.5	Նոր Զելանդիա	7	8.2	Շվեդիա	4	8.3
Սինգապուր	8	8.2	Սինգապուր	6	8.5	Ավստրալիա	8	8.1	Նիդեռլանդ-ներ	8	8.2
Ավստրալիա	8	8.2	Լյուքսեմբուրգ	6	8.5	Իսլանդիա	8	8.1	Գերմանիա	8	8.2
Ավստրիա	8	8.2	Նորվեգիա	6	8.5	Շվեյցարիա	10	7.9	Բելգիա	10	8.1
Միջինը		**8.35**			**8.63**			**8.31**			**8.32**

Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report*, էջ 29-ի և 30-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 5

ՍԻՄԻ ամենափոքր արժեքներ ունեցող աշխարհի 10 երկրները, ըստ դրա բաղադրիչների (ընդհանուր շարքում զբաղեցրած տեղերը և միավորները)

ՍԻՄԻ			ԻՔՄ			ՍՖԻ			ՄՍԻ		
Երկիրը	Ընդամենը	Միավորը	Երկիրը	Ընդամենը	Միավորը	Երկիրը	Ընդամենը	Միավորը	Երկիրը	Ընդամենը	Միավորը
Բոսնիա և Հերցեգովինա	116	3.6	Նիկարագուա	112	3.0	Բուրունդի	116	4.3	Սերբիա	116	2.8
Նիկարագուա	116	3.6	Կամերուն	112	3.8	Փոսկրե ափ	116	4.3	Բոսնիա և Հերցեգովինա	117	2.7
Պարագվայ	118	3.5	Բանգլադեշ	112	3.0	Ալժիր	116	4.3	Գվինեա	117	2.7
Բոլիվիա	119	3.4	Քենիա	112	4.3	Նիկարագուա	116	4.3	Ադրբեջան	119	2.6
Բուրունդի	120	3.3	Բոլիվիա	112	3.0	Չադ	120	4.2	Մոնտենեգրո	120	2.4
Չադ	121	3.2	Ղրղզստան	117	2.8	Լիբիա	121	4.0	Լիբիա	120	2.4
Զիմբաբվե	121	3.2	Էկվադոր	118	2.7	Բոլիվիա	121	4.0	Ալբանիա	122	2.3
Վենեսուելա	121	3.2	Պարագվայ	119	2.6	Ուգանդա	123	3.8	Բանգլադեշ	123	2.1
Փոսկրե ափ	124	3.1	Պակիստան	120	2.5	Բանգլադեշ	124	3.7	Հայաստան	124	1.5
Բանգլադեշ	125	2.9	Բուրունդի	120	2.5	Բրունեյ	125	3.4	Վրաստան	125	1.8
			Վենեսուելա	122	1.9						
			Զիմբաբվե	123	1.8						
			Փոսկրե ափ	124	1.7						
			Չադ	125	1.6						
Միջինը		**3.3**			**2.7**			**4.0**			**2.3**

Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report*, էջ 29-ի և 30-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 6

Աշխարհի երկրների դասակարգումը ըստ ՄԻՄԻ ցուցանիշի՝ ըստ առանձին քվինթիլների

Լավագույն 20%		Երկրորդ 20%		Երրորդ 20%		Չորրորդ 20%		Վատագույն 20%	
Երկիրը	ՄԻՄԻ-ն	Երկիրը	ՄԻՄԻ-ն	Երկիրը	ՄԻՄԻ-ն	Երկիրը	ՄԻՄԻ-ն	Երկիրը	ՄԻՄԻ-ն
Ֆինլանդիա	8.6	Կատար	6.8	Ուրուգվայ	5.7	Բենին	4.6	Նեպալ	4.0
Դանիա	8.5	Հարավային Կորեա	6.8	Սլովենիա	5.6	Շրի Լանկա	4.6	Ադրբեջան	4.0
Շվեդիա	8.5	Թայվան	6.8	Լեհաստան	5.5	Հոնդուրաս	4.6	Եթովպիա	4.0
Նիդեռլանդներ	8.4	Էստոնիա	6.7	Հնդկաստան	5.5	Տանզանիա	4.6	Ուգանդա	3.9
Նորվեգիա	8.3	Մալթա	6.6	Լատվիա	5.4	Ֆիլիպիններ	4.5	Սերբիա	3.9
Շվեյցարիա	8.3	Կիպրոս	6.6	Պանամա	5.4	Վիետնամ	4.5	Էկվադոր	3.9
Նոր Զելանդիա	8.3	Օման	6.5	Ռումինիա	5.4	Զամբիա	4.5	Պակիստան	3.9
Սինգապուր	8.2	Հունգարիա	6.5	Յամայկա	5.3	Մոնտենեգրո	4.5	Գվիանա	3.9
Ավստրալիա	8.2	Չիլի	6.4	Բուլղարիա	5.2	Մավրիտանիա	4.4	Հայաստան	3.8
Ավստրիա	8.2	Սլովակիա	6.4	Թուրքիա	5.2	Դոմինիկյան Հանրապետ.	4.4	Կամերուն	3.8
Լյուքսեմբուրգ	8.1	Պուերտո Ռիկո	6.3	Տրինիդադ և Տոբագո	5.2	Մոլդովա	4.4	Ալբանիա	3.8
Գերմանիա	8.0	Իսրայել	6.3	Գանա	5.2	Արգենտինա	4.4	Նիգերիա	3.8
Կանադա	8.0	Չեխիա	6.2	Թաիլանդ	5.2	Պերու	4.3	Վրաստան	3.7
Իռլանդիա	8.0	Բահրեյն	6.2	Բրազիլիա	5.1	Ղազախստան	4.3	Ալժիր	3.7
ԱՄՆ	7.9	Լիտվա	6.2	Չինաստան	5.1	Գվատեմալա	4.3	Լիբիա	3.7
Իսլանդիա	7.8	Հորդանան	6.1	Մարոկո	5.1	Քենիա	4.3	Բոսնիա և Հերցեգովինա	3.6

Լավագույն 20%		Երկրորդ 20%		Երրորդ 20%		Չորրորդ 20%		Վատագույն 20%	
Երկիրը	Ամիսվա	Երկիրը	Ամիսվա	Երկիրը	Ամիսվա	Երկիրը	Ամիսվա	Երկիրը	Ամիսվա
Միացյալ Թագավորութ.	7.8	Սաուդյան Արաբիա	6.1	Եգիպտոս	5.0	Ռուսաստան	4.3	Նիկարագուա	3.6
Ճապոնիա	7.6	Մալայզիա	6.1	Կոլումբիա	5.0	Բրունեյ	4.3	Պարագվայ	3.5
Հոնկոնգ	7.5	Իտալիա	6.0	Սիրիա	4.9	Մադագասկար	4.3	Բոլիվիա	3.4
Բելգիա	7.5	Բոթսվանա	6.0	Խորվաթիա	4.9	Սենեգալ	4.2	Բուրունդի	3.3
Ֆրանսիա	7.2	Հունաստան	5.9	Սալվադոր	4.8	Մոզամբիկ	4.2	Չադ	3.2
ԱՄԷ	7.1	Մավրիտիուս	5.9	Մալի	4.7	Ուկրաինա	4.1	Զիմբաբվե	3.2
Պորտուգալիա	7.0	Թունիս	5.9	Մեքսիկա	4.7	Ղրղզստան	4.1	Վենեսուելա	3.2
Հարավային Աֆրիկայի Հ.	6.8	Քուվեյթ	5.8	Մալավի	4.7	Ինդոնեզիա	4.1	Փոսկրե ափ	3.1
Իտալիա	6.8	Կոստա Ռիկա	5.7	Բուրկինա Ֆասո	4.6	Մակեդոնիա	4.1	Բանգլադեշ	2.9
Միջինը	**7.9**		**6.3**		**5.1**		**4.3**		**3.6**

Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report,* էջ 28-ի և 31-ի տվյալների հիման վրա:

Ֆինլանդիան վերջին 4 տարիներին գլխավորում է ՍԻՄԻ ցուցանիշով ամենալավ դիրքերը զբաղեցնող երկրների շարքը՝ 10 հնարավոր միավորից ունենալով 8,6 միավոր: 2010թ., մի շարք հանգամանքների պատճառով, Ֆինլանդիան իջել է 2007թ. և 2008թ. մակարդակներին: Ընդհանուր առմամբ, Սկանդինավյան երկրները շարունակում են Դանիայի հետ միասին զբաղեցնել առաջին տեղերը՝ 8,5 միավորով: Նորվեգիան 8,3 միավորով զբաղեցնում է 5-րդ տեղը: Առաջին 10 երկրների ցանկի մյուս երկրներն Արևմտյան Եվրոպայի երկրներն են, ներառյալ Նիդեռլանդները (8,4), Շվեյցարիան (8,3) և Ավստրիան (8,2), Նոր Զելանդիան (8,3 միավորով) Ասիայի և Օվկիանիայի տարածաշրջանից է, իսկ Ավստրալիան և Սինգապուրը (8,2 միավորով) եզրափակում են ՍԻՄԻ լավագույն ցուցանիշ ունեցող երկրների տասնյակը:

ՍԻՄԻ ցուցանիշով «հատակում» են գտնվում Բոսնիան և Հերցեգովինան (3,6), Նիկարագուան (3,6), Պարագվայը (3,5), Բոլիվիան (3,4), Բուրունդին (3,3), Չադը (3,2), Զիմբաբվեն (3,2), Վենեսուելան (3,2) և Փղոսկրե ափը (3,1): Բանգլադեշն ունի 2,9 միավոր, իսկ 2010թ. այդ ցուցանիշը կազմել է 2,6:

Աղյուսակ 6-ում բերված է աշխարհի երկրների ըստ ՍԻՄԻ ցուցանիշի դասակարգումը՝ ըստ առանձին քվինթիլների:

Աղյուսակ 6-ի յուրաքանչյուր քվինթիլում ընդգրկված է 25 երկիր: Նախորդ տարիների ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ տարեցտարի դրանք փոփոխվում են և երկիրը մի քվինթիլից տեղափոխվում է մյուսը: Հատկանշական է նաև, որ Հարավային Կովկասի երեք հանրապետությունները գտնվում են վատագույն քվինթիլում, իսկ ընդհանուր ցուցակում Ադրբեջանը զբաղեցնում է 101-րդ, Հայաստանը՝ 109-րդ, Վրաստանը՝ 113-րդ տեղերը (125 երկրների մեջ):

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում ՍԻՄԻ վերլուծությունը տարբեր սկզբունքներով խմբավորված տնտեսական միություններում, ինչպես նաև երկրների այն խմբերում, որի մեջ մտնում է Հայաստանը: Երկրների այդպիսի խումբ է Հայաստանի Հանրապետության հարևաններից ձևավորված խումբը (*Աղյուսակ 7*):

Աղյուսակ 7-ի տվյալներից հետևում է, որ Հայաստանի և նրա հարևանների շարքում ՍԻՄԻ ցուցանիշով (առանց Իրանի) առաջինը Թուրքիան է, որի ցուցանիշները զգալիորեն գերազանցում են Հարավային Կովկասի երեք հանրապետությունների համապատասխան ցուցանիշները: Վերջիններիս շարքում առաջինը Ադրբեջանն է (4,0), երկրորդ տեղում է Հայաստանը (3,8), հետո միայն Վրաստանը (3,7): Նշված երկրների տարածաշրջանային միջինից Հայաստանը չի զիջում միայն ՍՖԻ իր ցուցանիշով (5,8), որը հավասար է տարածաշրջանի երկրների համար հաշվարկված միջին մեծությանը:

Աղյուսակ 7

Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների ՍԻՄԻ-ն և դրա բաղադրիչների մեծությունները

Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
Հայաստան	3.8	3.8	5.8	1.9
Ադրբեջան	4.0	3.6	5.7	2.6
Վրաստան	3.7	3.7	5.8	1.8
Թուրքիա	5.2	4.7	6.0	5.0
Տարածաշրջանի երկրների միջինը	**4.18**	**3.95**	**5.83**	**2.83**

Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ տվյալները բացակայում են:
Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report*, էջ 29-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 8-ում բերված են նախկին Խորհրդային Միության հանրապետությունների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մասին տվյալները, իսկ *Աղյուսակ 9*-ում՝ ԱՊՀ կազմում գտնվող երկրների վերաբերյալ նույն ցուցանիշները:

Աղյուսակ 8

Նախկին Խորհրդային Միության հանրապետությունների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները

Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
Հայաստան	3.8	3.8	5.8	1.9
Ադրբեջան	4.0	3.6	5.7	2.6
Էստոնիա	6.7	6.8	7.5	5.6
Վրաստան	3.7	3.7	5.8	1.8
Ղազախստան	4.3	4.0	5.8	3.1
Ղրղզստան	4.1	2.8	5.2	4.4
Լատվիա	5.4	5.6	6.3	4.4
Լիտվա	6.2	5.7	6.9	5.9
Մոլդովա	4.4	3.8	5.2	4.1
Ռուսաստան	4.3	3.3	5.0	4.6
Ուկրաինա	4.1	3.7	4.8	3.9
Միջինը	**4.64**	**4.25**	**5.82**	**3.85**

ԱՊՀ մյուս երկրների վերաբերյալ տվյալները բացակայում են:
Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report*, էջ 29-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 8-ի տվյալներից հետևում է, որ ՍԻՄԻ միջին ցուցանիշը գերազանցում են միայն մերձբալթյան հանրապետությունները: Հայաստանի Հանրապետությունը ՍՖԻ ցուցանիշով (5,8) է միայն հավասարվում նշված երկրների ՍՖԻ միջին ցուցանիշին: Գործերի վիճակը հատկապես վատ է ՄՍԻ ցուցանիշի մասով, որը նշված 11 հանրապետությունների շարքում երկրորդ ցածր ցուցանիշն է (1,9) Վրաստանից հետո (1,8): Այստեղից հետևում է, որ պետական կառավարման համապատասխան մարմինները միջոցներ պետք է ձեռնարկեն նշված բացը լրացնելու համար: Իսկ եթե փորձենք կազմել նախկին Խորհրդային Միության հանրապետությունների շարքը՝ ելնելով ՍԻՄԻ նվազող մեծությունից, ապա պատկերը հետևյալն է. Էստոնիա (6,7), Լիտվա (6,2), Լատվիա (5,4), Մոլդովա (4,4), Ռուսաստան (4,3), Ղազախստան (4,3), Ուկրաինա (4,1), Ղրղզստան (4,1), Ադրբեջան (4,0), Հայաստան (3,8), Վրաստան (3,7): Այսինքն՝ նշված 11 երկրների շարքում Հարավային Կովկասի երկրները զբաղեցնում են վերջին երեք տեղերը, Հայաստանը՝ նախավերջին տեղը: Իրավական և քաղաքական միջավայրի մեծության տեսանկյունից Հայաստանը գերազանցում է ինչպես Վրաստանին (3,7), այնպես էլ Ադրբեջանին (3,6): Այս ցուցանիշն ամենացածրն է Ռուսաստանում (3,3): Զգալիորեն լավ վիճակում է Հայաստանի Հանրապետության ՍՖԻ ցուցանիշը (5,8): Իսկ ԱՊՀ երկրների շարքում (*Աղյուսակ 9*) ՄՍԻ ամենացածր ցուցանիշ ունի Հայաստանի Հանրապետությունը, ինչի հետևանքով ՍԻՄԻ միջին ցուցանիշը ԱՊՀ միջին ցուցանիշից ցածր է ստացվում, թեև մեր հանրապետությունը, ինչպես ԻՔՄ-ի, այնպես էլ ՍՖԻ-ի ցուցանիշներով գերազանցում է ԱՊՀ երկրների համար հաշվարկված համապատասխան միջին մեծությունները:

Աղյուսակ 9

ԱՊՀ կազմում գտնվող երկրների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները

Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
Հայաստան	3.8	3.8	5.8	1.9
Ադրբեջան	4.0	3.6	5.7	2.6
Ղազախստան	4.3	4.0	5.8	3.1
Ղրղզստան	4.1	2.8	5.2	4.4
Մոլդովա	4.4	3.8	5.2	4.1
Ռուսաստան	4.3	3.3	5.0	4.6
Ուկրաինա	4.1	3.7	4.8	3.9
Միջինը	**4.14**	**3.57**	**5.36**	**3.51**

ԱՊՀ մյուս երկրների վերաբերյալ տվյալները բացակայում են:
Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report*, էջ 29-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 10

Նախկին համայնավարական երկրների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները

Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
Ալբանիա	3.8	3.8	5.2	2.3
Հայաստան	3.8	3.8	5.8	1.9
Ադրբեջան	4.0	3.6	5.7	2.6
Բոսնիա և Հերցեգովինա	3.6	3.8	4.4	2.7
Բուլղարիա	5.2	4.6	6.0	5.1
Չինաստան	5.1	4.4	6.1	4.8
Խորվաթիա	4.9	5.1	5.1	4.5
Չեխիա	6.2	6.1	6.0	6.6
Էստոնիա	6.7	6.8	7.5	5.6
Վրաստան	3.7	3.7	5.8	1.8
Հունգարիա	6.5	6.1	6.6	6.7
Ղազախստան	4.3	4.0	5.8	3.1
Ղրղզստան	4.1	2.8	5.2	4.4
Լատվիա	5.4	5.6	6.3	4.4
Լիտվա	6.2	5.7	6.9	5.9
Մակեդոնիա	4.1	4.1	5.0	3.1
Մոլդովա	4.4	3.8	5.2	4.1
Մոնտենեգրո	4.5	4.9	6.2	2.4
Լեհաստան	5.5	5.7	4.8	6.1
Ռումինիա	5.4	4.8	5.6	5.8
Ռուսաստան	4.3	3.3	5.0	4.6
Սերբիա	3.9	4.0	4.8	2.8
Սլովակիա	6.4	5.8	7.1	6.2
Սլովենիա	5.6	6.5	4.7	5.5
Ուկրաինա	4.1	3.7	4.8	3.9
Վիետնամ	4.5	4.4	5.7	3.5
Միջինը	**4.85**	**4.65**	**5.67**	**4.25**

Նախկին համայնավարական մյուս երկրների վերաբերյալ տվյալները բացակայում են:
Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report*, էջ 29-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 10-ում ներկայացված են նախկին սոցիալիստական երկրների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները: Աղյուսակի տվյալները վկայում են, որ ՍԻՄԻ ամենացածր ցուցանիշներ ունեն Բոսնիան և Հերցեգովինան (3,6), Վրաստանը (3,7), Ալբանիան (3,8), Հայաստանը (3,8) և Սերբիան (3,9), իսկ ամենաբարձր ցուցանիշներ՝ Էստոնիան (6,7), Հունգարիան (6,5) և Սլովակիան (6,4): ԻՔՄ-ի մեծությամբ առաջատարներն են Էստոնիան (6,8), Սլովենիան (6,5) և Հունգարիան (6,1), իսկ «հետնապահներն» են՝ Ղրղզստանը (2,8), Ռուսաստանը (3,3) և Ադրբեջանը (3,6): ՍՖԻ-ի մեծությամբ առաջատարներն

են՝ Էստոնիան (7,5), Սլովակիան (7,1) և Լիտվան (6,9), իսկ «հետնապահներն» են՝ Բոսնիան և Հերցեգովինան (4,4), Սլովենիան (4,7) և Լեհաստանը (4,8), Սերբիան (4,8), Ուկրաինան (4,8): ՄՍԻ-ի մեծությամբ առաջատարներն են՝ Հունգարիան (6,7), Չեխիան (6,6) և Սլովակիան (6,2), իսկ «հետնապահներն» են՝ Վրաստանը (1,8), Հայաստանը (1,9) և Ալբանիան (2,3): Նախկին համայնավարական երկրների միջին ցուցանիշին Հայաստանը գերազանցում է միայն ՍՖԻ-ի մեծությամբ, իսկ մնացած ցուցանիշներով զգալիորեն զիջում է դրանց:

Աղյուսակ 11

Եվրամիության երկրների ՍԻՍԻ և դրա բաղադրիչների մեծությունները

Երկրները	ՍԻՍԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
Ավստրիա	8.2	8.4	7.8	8.3
Բելգիա	7.5	7.4	6.9	8.1
Բուլղարիա	5.2	4.6	6.0	5.1
Կիպրոս	6.6	6.9	6.8	6.0
Չեխիա	6.2	6.1	6.0	6.6
Դանիա	8.5	8.7	8.3	8.5
Էստոնիա	6.7	6.8	7.5	5.6
Ֆրանսիա	7.2	7.2	6.5	7.9
Գերմանիա	8.0	8.3	7.5	8.2
Հունաստան	5.9	5.6	6.2	6.0
Հունգարիա	6.5	6.1	6.6	6.7
Իսլանդիա	7.8	8.5	8.1	6.9
Իռլանդիա	8.0	8.3	7.8	7.9
Իտալիա	6.0	5.3	5.7	7.1
Լատվիա	5.4	5.6	6.3	4.4
Լիտվա	6.2	5.7	6.9	5.9
Լյուքսեմբուրգ	8.1	8.5	7.8	8.0
Նիդեռլանդներ	8.4	8.5	8.5	8.2
Լեհաստան	5.5	5.7	4.8	6.1
Պորտուգալիա	7.0	7.1	6.9	7.0
Ռումինիա	5.4	4.8	5.6	5.8
Սլովակիա	6.4	5.8	7.1	6.2
Սլովենիա	5.6	6.5	4.7	5.5
Իսպանիա	6.8	6.3	6.9	7.2
Շվեյցարիա	8.3	8.7	7.9	8.3
Միջինը	**6.86**	**6.86**	**6.84**	**6.86**

Եվրամիության մյուս երկրների վերաբերյալ տվյալները բացակայում են:
Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report,* էջ 29-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 12

ՏՀԶԿ երկրների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները

Երկրները	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՍԻ
Ավստրալիա	8.2	8.5	8.1	8.0
Ավստրիա	8.2	8.4	7.8	8.3
Բելգիա	7.5	7.4	6.9	8.1
Կանադա	8.0	8.4	7.8	7.9
Չիլի	6.4	6.8	7.0	5.4
Չեխիա	6.2	6.1	6.0	6.6
Դանիա	8.5	8.7	8.3	8.5
Ֆինլանդիա	8.6	8.9	8.6	8.5
Ֆրանսիա	7.2	7.2	6.5	7.9
Գերմանիա	8.0	8.3	7.5	8.2
Հունաստան	5.9	5.6	6.2	6.0
Հունգարիա	6.5	6.1	6.6	6.7
Իսլանդիա	7.8	8.5	8.1	6.9
Իռլանդիա	8.0	8.3	7.8	7.9
Իտալիա	6.0	5.3	5.7	7.1
Ճապոնիա	7.6	7.4	7.1	8.3
Լյուքսեմբուրգ	8.1	8.5	7.8	8.0
Մեքսիկա	4.7	4.0	5.3	4.9
Նիդեռլանդներ	8.4	8.5	8.5	8.2
Նոր Զելանդիա	8.3	8.8	8.2	7.9
Նորվեգիա	8.3	8.5	8.6	7.9
Պորտուգալիա	7.0	7.1	6.9	7.0
Սլովակիա	6.4	5.8	7.1	6.2
Իսպանիա	6.8	6.3	6.9	7.2
Հարավային Կորեա	6.8	6.1	7.2	7.0
Շվեդիա	8.5	8.7	8.5	8.3
Շվեյցարիա	8.3	8.7	7.9	8.3
Թուրքիա	5.2	4.7	6.0	5.0
Միացյալ Թագավորություն	7.8	7.8	7.7	7.9
ԱՄՆ	7.9	7.5	7.8	8.5
Միջինը	**7.37**	**7.36**	**7.35**	**7.42**

ՏՀԶԿ մյուս երկրների վերաբերյալ տվյալները բացակայում են:
Աղյուսակը կազմվել է *International Property Rights Index, 2010 Report,* էջ 29-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 11-ում բերված են Եվրամիության երկրների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները: Եվրամիությունում ՍԻՄԻ-ի առաջատարը Նիդեռլանդներն է (8,4), իսկ ամենավերջին տեղը զբաղեցնող պետությունը

Բուլղարիան է (5,2): Հետաքրքիր է նաև նշել, որ Եվրամիության երկրների ՍԻՄԻ-ի և դրա բաղադրիչների բոլոր միջին մեծությունները զիջում են Տնտեսական համագործակցության և կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների համար հաշվարկված համապատասխան միջին ցուցանիշներին:

Աղյուսակ 12-ում ներկայացված են ՏՀԶԿ երկրների ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունները: ՏՀԶԿ երկրների շարքում ՍԻՄԻ ամենաբարձր միավորներ ունեն Ֆինլանդիան (8,6), որը նաև աշխարհի ամենալավ ցուցանիշն է, Դանիան (8,5), Շվեդիան (8,5) և Նիդեռլանդները (8,4), իսկ ամենավատ ցուցանիշներն ունեն Մեքսիկան (4,7), Թուրքիան (5,2) և Հունաստանը (5,9):

Ներկայացնենք նաև վերը բերված աղյուսակներում տարբեր սկզբունքներով խմբավորված երկրների համար ՍԻՄԻ և դրա բաղադրիչների միջինացված տվյալների վերաբերյալ տեղեկությունները, որոնք ամփոփված են *Աղյուսակ 13*-ում:

Աղյուսակ 13

ՍԻՄԻ և դրա բաղադրիչների միջին ցուցանիշները տարբեր սկզբունքներով խմբավորված երկրների համար

N	Երկրների խմբերը	ՍԻՄԻ	ԻՔՄ	ՍՖԻ	ՄՄԻ
1	Ամենամեծ արժեք ունեցող 10 երկրները	8.35	8.62	8.28	8.18
2	Ամենափոքր արժեք ունեցող 10 երկրները	3.30	2.49	4.30	3.15
3	Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրները (4)	4.18	3.95	5.83	2.83
4	Նախկին Խորհրդային Միության կազմի մեջ մտնող հանրապետությունները (11)	4.64	4.25	5.82	3.85
5	ԱՊՀ երկրները (7)	4.14	3.57	5.36	3.51
6	Նախկին համայնավարական երկրները (26)	4.85	4.65	5.67	4.25
7	Եվրամիության երկրները (25)	6.86	6.86	6.84	6.86
8	ՏՀԶԿ երկրները (30)	7.37	7.36	7.35	7.42
9	**Աշխարհի 125 երկրները**	**5.45**	**5.20**	**6.04**	**5.13**

Տարբեր սկզբունքներով խմբավորված երկրների համար ՍԻՄԻ և դրա բաղադրիչների միջին ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միջև կան էական տարբերություններ, ինչը բացատրվում է այդ երկրների զարգացման սոցիալ-տնտեսական, քաղաքական, պատմական, մշակութային և այլ պատճառներով: Պակաս կարևորություն չեն ունեցել նաև տարբեր ազգերի գիտակցության մեջ սեփականության և դրա բաղադրիչների նկատմամբ ձևավորված և արմատավորված սովորույթներն ու ավանդույթները, սե-

փականության իրավունքի պաշտպանության կայացած ինստիտուտների (սեփականության իրավունքի գրանցման, դատական համակարգի և այլն) գործունեությունը և դրանց արդյունավետությունը: Նկատվող ընդհանուր օրինաչափությունն այն է, որ որքան զարգացած է երկրների խումբը, այնքան բարձր է ՍԻՄԻ և դրա բաղադրիչների մեծությունը: Այստեղից կարելի է կատարել այն եզրակացությունը, ըստ որի՝ սեփականության իրավունքը և դրա բաղադրիչները մարդկային քաղաքակրթության կարևոր ձեռքբերումներից և բնակչության կենսամակարդակի բարձր աստիճանի ապահովման հիմնական միջոցներից են:

Միաժամանակ պետք է նշել, որ աշխարհը և ձևավորված տարածաշրջանային և տնտեսական միավորումները դեռևս հեռու են այդ ցուցանիշի և դրա բաղադրիչների իդեալական վիճակ ունենալուց: Բավական է նշել, որ ՍԻՄԻ-ի ցուցանիշը 10 հնարավոր միավորից աշխարհի համար կազմում է ընդամենը 5,45 միավոր: Հայաստանի Հանրապետությունը ՍԻՄԻ ու դրա բաղադրիչների մեծություններով, բոլոր ցուցանիշների գծով, հետ է մնում աշխարհի միջին ցուցանիշից, ինչից հետևում է, որ հատկապես պետական կառավարման համապատասխան մարմինները և ՀՀ կառավարությունն ունեն զգալի բացթողումներ ու անելիքներ: Այլապես, ժամանակակից աշխարհում, արտադրության գործոնների ազատ տեղաշարժի պայմաններում, այս իրավիճակը կարող է հանգեցնել կապիտալի արտահանման այլ երկրներ, դրանով իսկ թուլացնել հանրապետության զարգացման և վերարտադրության ներուժը՝ այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով ու անդառնալի կորուստներով:

Աղյուսակ 14-ում բերված է աշխարհի երկրների դասակարգումն ըստ ԻՔՄ-ի: Հատկանշական է, որ աղյուսակում նշված 45 երկրներում (երկրների ընդհանուր թվի 36%-ում) ԻՔՄ մեծությունն ավելի մեծ է, քան աշխարհի ԻՔՄ-ի միջին մեծությունը: Այսինքն՝ 80 երկրում (երկրների ընդհանուր թվի 64%-ում) ԻՔՄ-ի մեծությունն ավելի փոքր է աշխարհի միջին մեծությունից: Հայաստանն այդ շարքում 3,8 միավորով 89-րդ տեղը բաժանում է Կոլումբիայի, Ալբանիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Մոլդովայի և Սիրիայի հետ: Մեր հարևաններից Վրաստանը 3,7 միավորով զբաղեցնում է 95-րդ տեղը, իսկ Ադրբեջանը՝ 3,6 միավորով 100-րդ տեղը:

Աղյուսակ 14

Աշխարհի երկրների դասակարգումը ըստ ԻՔՄ-ի [6, p. 33]

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը
1	Ֆինլանդիա	8.9		62	Եգիպտոս	4.7
2	Նոր Զելանդիա	8.8		62	Տրինիդադ և Տոբագո	4.7
3	Շվեդիա	8.7		66	Լիբիա	4.6
3	Դանիա	8.7		66	Բուլղարիա	4.6
3	Շվեյցարիա	8.7		66	Յամայկա	4.6
6	Իսլանդիա	8.5		66	Տանզանիա	4.6
6	Նիդեռլանդներ	8.5		66	Բենին	4.6
6	Սինգապուր	8.5		71	Մարոկո	4.5
6	Լյուքսեմբուրգ	8.5		72	Զամբիա	4.4
6	Նորվեգիա	8.5		72	Վիետնամ	4.4
6	Ավստրալիա	8.5		72	Մալի	4.4
12	Ավստրիա	8.4		72	Թաիլանդ	4.4
12	Կանադա	8.4		72	Չինաստան	4.4
14	Գերմանիա	8.3		77	Պանամա	4.3
14	Իռլանդիա	8.3		77	Բուրկինա Ֆասո	4.3
16	Հոնկոնգ	8.1		77	Էլ Սալվադոր	4.3
17	Միացյալ Թագավորություն	7.8		80	Մոզամբիկ	4.2
18	ԱՄՆ	7.5		81	Մակեդոնիա	4.1
18	Մալթա	7.5		81	Մադագասկար	4.1
20	Բելգիա	7.4		83	Դոմինիկյան Հանրապ.	4.0
20	Ճապոնիա	7.4		83	Սերբիա	4.0
22	Կատար	7.2		83	Ղազախստան	4.0
22	Ֆրանսիա	7.2		83	Շրի Լանկա	4.0
24	Պորտուգալիա	7.1		83	Մեքսիկա	4.0
25	Կիպրոս	6.9		83	Սենեգալ	4.0
25	Բոթսվանա	6.9		89	Հայաստան	3.8
27	Էստոնիա	6.8		89	Կոլումբիա	3.8
27	Չիլի	6.8		89	Ալբանիա	3.8
27	ԱՄԷ	6.8		89	Բոսնիա և Հերցեգովինա	3.8
30	Ուրուգվայ	6.7		89	Մոլդովա	3.8
30	Օման	6.7		89	Սիրիա	3.8
32	Մավրիտիուս	6.6		95	Ուկրաինա	3.7
33	Սլովենիա	6.5		95	Վրաստան	3.7

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը
34	Բրունեյ	6.3		95	Արգենտինա	3.7
34	Իսպանիա	6.3		95	Գվիանա	3.7
34	Քուվեյթ	6.3		95	Ինդոնեզիա	3.7
34	Թայվան	6.3		100	Հոնդուրաս	3.6
34	Կոստա Ռիկա	6.3		100	Ադրբեջան	3.6
39	Պուերտո Ռիկո	6.2		100	Ուգանդա	3.6
40	Չեխիա	6.1		100	Պերու	3.6
40	Հարավային Կորեա	6.1		104	Գվատեմալա	3.5
40	Հունգարիա	6.1		104	Ալժիր	3.5
43	Իսրայել	5.9		104	Ֆիլիպիններ	3.5
44	Սլովակիա	5.8		107	Ռուսաստան	3.3
45	Լեհաստան	5.7		107	Մավրիտանիա	3.3
45	Հարավային Աֆրիկայի Հանր.	5.7		109	Եթովպիա	3.1
45	Բահրեյն	5.7		109	Նեպալ	3.1
45	Հորդանան	5.7		109	Նիգերիա	3.1
45	Լիտվա	5.7		112	Նիկարագուա	3.0
45	Թունիս	5.7		112	Կամերուն	3.0
45	Մալայզիա	5.7		112	Բանգլադեշ	3.0
52	Հունաստան	5.6		112	Քենիա	3.0
52	Լատվիա	5.6		112	Բոլիվիա	3.0
54	Սաուդյան Արաբիա	5.4		117	Ղրղզստան	2.8
55	Իտալիա	5.3		118	Էկվադոր	2.7
56	Խորվաթիա	5.1		119	Պարագվայ	2.6
57	Մալավի	5.0		120	Պաղեստին	2.5
58	Մոնտենեգրո	4.9		120	Բուրունդի	2.5
58	Գանա	4.9		122	Վենեսուելա	1.9
60	Ռումինիա	4.8		123	Զիմբաբվե	1.8
60	Հնդկաստան	4.8		124	Փոսկրե ափ	1.7
62	Թուրքիա	4.7		125	Չադ	1.6
62	Բրազիլիա	4.7			**Միջինը**	**5.71**

Հայաստանի Հանրապետության տեղն անհամեմատ լավն է ՍՖԻ ցուցանիշով, որը 5,8 միավորով 66-րդ տեղը բաժանում է Պերուի, Ղազախստանի, Պաղեստինի, Զամբիայի և Վրաստանի հետ: Ադրբեջանը 5,7 միավորով զբաղեցնում է 72-րդ տեղը (*Աղյուսակ 15*):

Աղյուսակ 15

Աշխարհի երկրների դասակարգումը ըստ ՍՖԻ-ի [6, p. 34]

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը
1	Նորվեգիա	8.6		62	Մարոկո	5.9
1	Ֆինլանդիա	8.6		62	Յամայկա	5.9
3	Շվեդիա	8.5		66	Պերու	5.8
3	Նիդեռլանդներ	8.5		66	Ղազախստան	5.8
5	Դանիա	8.3		66	Հայաստան	5.8
5	Սինգապուր	8.3		66	Պաղեստին	5.8
7	Նոր Զելանդիա	8.2		66	Զամբիա	5.8
8	Ավստրալիա	8.1		66	Վրաստան	5.8
8	Իսլանդիա	8.1		72	Ադրբեջան	5.7
10	Շվեյցարիա	7.9		72	Գվատեմալա	5.7
11	Հոնկոնգ	7.8		72	Վիետնամ	5.7
11	Լյուքսեմբուրգ	7.8		72	Եգիպտոս	5.7
11	Ավստրիա	7.8		72	Իտալիա	5.7
11	Իռլանդիա	7.8		77	Ռումինիա	5.6
11	ԱՄՆ	7.8		78	Նեպալ	5.5
11	Կանադա	7.8		78	Չինաստան	5.5
17	ԱՄԷ	7.7		78	Ինդոնեզիա	5.5
17	Միացյալ Թագավորություն	7.7		81	Բրազիլիա	5.4
19	Օման	7.6		81	Ֆիլիպիններ	5.4
20	Էստոնիա	7.5		81	Տրինիդադ և Տոբագո	5.4
20	Գերմանիա	7.5		81	Ուրուգվայ	5.4
22	Բահրեյն	7.4		85	Մեքսիկա	5.3
22	Հարավային Աֆրիկա	7.4		86	Ալբանիա	5.2
24	Թայվան	7.3		86	Մավրիտանիա	5.2
24	Սաուդյան Արաբիա	7.3		86	Ղրղզստան	5.2
24	Կատար	7.3		86	Մոլդովա	5.2
27	Հարավային Կորեա	7.2		86	Գվիանա	5.2
28	Սլովակիա	7.1		86	Դոմինիկյան Հանրապ.	5.2
28	Ճապոնիա	7.1		92	Մալավի	5.1
30	Չիլի	7.0		92	Խորվաթիա	5.1
30	Թունիս	7.0		92	Մալի	5.1

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը
30	Քուվեյթ	7.0		95	Ռուսաստան	5.0
33	Լիտվա	6.9		95	Մակեդոնիա	5.0
33	Պորտուգալիա	6.9		97	Տանզանիա	4.9
33	Իսպանիա	6.9		98	Սերբիա	4.8
33	Պանամա	6.9		98	Լեհաստան	4.8
33	Թաիլանդ	6.9		98	Ուկրաինա	4.8
33	Հորդանան	6.9		98	Եթովպիա	4.8
33	Բելգիա	6.9		98	Մադագասկար	4.8
33	Բոթսվանա	6.9		103	Պարագվայ	4.7
41	Կիպրոս	6.8		103	Սլովենիա	4.7
42	Մալայզիա	6.7		103	Բենին	4.7
43	Հունգարիա	6.6		103	Արգենտինա	4.7
43	Հնդկաստան	6.6		103	Զիմբաբվե	4.7
45	Ֆրանսիա	6.5		108	Կամերուն	4.7
45	Սիրիա	6.5		108	Բուրկինա Ֆասո	4.6
47	Մալթա	6.4		108	Մոզամբիկ	4.6
47	Մավրիտիուս	6.4		108	Սենեգալ	4.6
49	Լատվիա	6.3		112	Էկվադոր	4.5
50	Հունաստան	6.2		112	Նիգերիա	4.5
50	Մոնտենեգրո	6.2		114	Բոսնիա և Հերցեգովինա	4.4
50	Պուերտո Ռիկո	6.2		114	Վենեսուելա	4.3
50	Իսրայել	6.2		116	Բուրունդի	4.3
54	Կոստա Ռիկա	6.1		116	Փղոսկրե ափ	4.3
54	Չինաստան	6.1		116	Ալժիր	4.3
56	Բուլղարիա	6.0		116	Նիկարագուա	4.3
56	Քենիա	6.0		120	Չադ	4.2
56	Շրի Լանկա	6.0		121	Լիբիա	4.0
56	Էլ Սալվադոր	6.0		121	Բոլիվիա	4.0
56	Չեխիա	6.0		123	Ուգանդա	3.8
56	Թուրքիա	6.0		124	Բանգլադեշ	3.7
62	Հոնդուրաս	5.9		125	Բրունեյ	3.4
62	Կոլումբիա	5.9			**Միջինը**	**6.04**

Հայաստանի Հանրապետությունը ՄՍԻ ցուցանիշով 125 երկրների շարքում զբաղեցնում է նախավերջին՝ 124-րդ տեղը (1,9 միավորով), Վրաստանը զբաղեցնում է վերջին՝ 125-րդ տեղը (1,8 միավորով), իսկ Ադրբեջանը՝ 2,6 միավորով 119-րդ տեղը: Ըստ որում, դատելով ՄՍԻ աշխարհի միջին ցուցանիշով, Հայաստանում գործերի վիճակը շուրջ երեք անգամ ավելի վատ է: Աշխարհի 43 երկրում (ցանկում ընդգրկված երկրների ընդհանուր թվի 34,4%-ում) ՄՍԻ-ի մեծություններն ավելի ցածր են աշխարհի միջին մեծություններից (*Աղյուսակ 16*):

Աղյուսակ 16

Աշխարհի երկրների դասակարգումը ըստ ՄՄԻ-ի [6, p. 35]

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը
1	Դանիա	8.5		63	Մալի	4.8
1	Ֆինլանդիա	8.5		63	Մարոկո	4.8
1	ԱՄՆ	8.5		63	Ֆիլիպիններ	4.8
4	Ճապոնիա	8.3		67	Արգենտինա	4.7
4	Շվեյցարիա	8.3		67	Բենին	4.7
4	Ավստրիա	8.3		67	Եգիպտոս	4.7
4	Շվեդիա	8.3		67	Մավրիտանիա	4.7
8	Նիդեռլանդներ	8.2		67	Կոստա Ռիկա	4.7
8	Գերմանիա	8.2		72	Ռուսաստան	4.6
10	Բելգիա	8.1		73	Սիրիա	4.5
11	Ավստրալիա	8.0		73	Խորվաթիա	4.5
11	Լյուքսեմբուրգ	8.0		75	Էկվադոր	4.4
13	Նոր Զելանդիա	7.9		75	Ուգանդա	4.4
13	Կանադա	7.9		75	Լատվիա	4.4
13	Իռլանդիա	7.9		75	Ղրղզստան	4.4
13	Միացյալ Թագավորություն	7.9		79	Բոթսվանա	4.3
13	Սինգապուր	7.9		79	Թաիլանդ	4.3
13	Ֆրանսիա	7.9		81	Տանզանիա	4.2
13	Նորվեգիա	7.9		81	Հոնդուրաս	4.2
20	Հարավային Աֆրիկայի Հանր.	7.4		83	Մոլդովա	4.1
21	Իսպանիա	7.2		83	Քուվեյթ	4.1
22	Իտալիա	7.1		83	Սենեգալ	4.1
23	Պորտուգալիա	7.0		86	Էլ Սալվադոր	4.0
23	Հարավային Կորեա	7.0		86	Եթովպիա	4.0
25	Իսրայել	6.9		86	Քենիա	4.0
25	Իսլանդիա	6.9		89	Մադագասկար	3.9
27	Հոնկոնգ	6.7		89	Ուկրաինա	3.9
27	Թայվան	6.7		89	Դոմինիկյան Հանրապ.	3.9
27	ԱՄԷ	6.7		89	Մալավի	3.9
27	Հունգարիա	6.7		89	Շրի Լանկա	3.9
27	Պուերտո Ռիկո	6.7		89	Չադ	3.9
32	Չեխիա	6.6		95	Կամերուն	3.8
33	Սլովակիա	6.2		95	Մոզամբիկ	3.8
34	Լեհաստան	6.1		95	Նիգերիա	3.8
35	Կիպրոս	6.0		98	Գվատեմալա	3.7

Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը		Զբաղեցրած դիրքը	Երկիրը	Միավորը
35	Մալթա	6.0		99	Նիկարագուա	3.6
35	Հունաստան	6.0		99	Պերու	3.6
38	Լիտվա	5.9		101	Նեպալ	3.5
38	Կատար	5.9		101	Վիետնամ	3.5
40	Մալայզիա	5.8		103	Ալժիր	3.4
40	Ռումինիա	5.8		103	Բոլիվիա	3.4
42	Հորդանան	5.7		105	Փղոսկրե ափ	3.3
43	Էստոնիա	5.6		105	Պաղեստին	3.3
43	Տրինիդադ և Տոբագո	5.6		105	Զամբիա	3.3
45	Սաուդյան Արաբիա	5.5		108	Ինդոնեզիա	3.2
45	Բահրեյն	5.5		108	Վենեսուելա	3.2
45	Սլովենիա	5.5		108	Բրունեյ	3.2
45	Յամայկա	5.5		111	Պարագվայ	3.1
49	Չիլի	5.4		111	Բուրունդի	3.1
50	Հնդկաստան	5.3		111	Ղազախստան	3.1
50	Կոլումբիա	5.3		111	Մակեդոնիա	3.1
52	Գանա	5.2		111	Զիմբաբվե	3.1
52	Բրազիլիա	5.2		116	Սերբիա	2.8
52	Օման	5.2		117	Բոսնիա և Հերցեգովինա	2.7
55	Բուլղարիա	5.1		117	Գվիանա	2.7
56	Բուրկինա Ֆասո	5.0		119	Ադրբեջան	2.6
56	Պանամա	5.0		120	Մոնտենեգրո	2.4
56	Թուրքիա	5.0		120	Լիբիա	2.4
59	Թունիս	4.9		122	Ալբանիա	2.3
59	Ուրուգվայ	4.9		123	Բանգլադեշ	2.1
59	Մավրիտիուս	4.9		124	Հայաստան	1.9
59	Մեքսիկա	4.9		125	Վրաստան	1.8
63	Չինաստան	4.8			**Միջինը**	**5.64**

Սեփականության իրավունքի ինդեքսների մեծությունների փոփոխությունը ցույց է տալիս, թե ժամանակի ընթացքում ինչ ուղղությամբ է ընթանում իրավունքների պաշտպանության գործընթացը: *Աղյուսակ 17*-ում բերված են ՍԻՄԻ-ի փոփոխությունները 2009-2010թթ.: Տնտեսական ճգնաժամի պատճառով ՍԻՄԻ ցուցանիշը 2010թ. 2009թ. համեմատ նվազել է 0,0338 միավորի չափով: Աղյուսակում բերված 30 երկրներում նկատվել է ՍԻՄԻ ցուցանիշի նվազում, 12 երկրներում համեմատություններ չեն արվել 2009թ. ՍԻՄԻ տվյալների բացակայության պատճառով, իսկ մնացած երկրներում նկատվել է ՍԻՄԻ ցուցանիշի աճ:

Աղյուսակ 17

ՍԻՄԻ փոփոխությունները 2009-2010 թվականներին [6, p. 36]

Երկրները	Փոփոխությունը	ՍԻՄԻ 2010թ.	ՍԻՄԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՍԻՄԻ 2010թ.	ՍԻՄԻ 2009թ.
Մոնտենեգրո	0.6	4.5	3.9		Արգենտինա	0.0	4.4	4.4
Ադրբեջան	0.5	4.0	3.4		Տանզանիա	0.0	4.6	4.6
Զամբիա	0.5	4.5	4.0		Բուրկինա Ֆասո	0.0	4.6	4.7
Ռումինիա	0.5	5.4	4.9		Շվեդիա	0.0	8.5	8.5
Բանգլադեշ	0.4	2.9	2.6		Նիկարագուա	0.0	3.6	3.7
Չինաստան	0.4	5.1	4.7		Իռլանդիա	0.0	8.0	8.0
Եգիպտոս	0.3	5.0	4.7		Ֆիլիպիններ	0.0	4.5	4.6
Բոսնիա և Հերցեգովինա	0.3	3.6	3.3		Կամերուն	0.0	3.8	3.8
Ալբանիա	0.3	3.8	3.5		Դանիա	0.0	8.5	8.5
Մակեդոնիա	0.3	4.1	3.8		Զիմբաբվե	0.0	3.2	3.2
Բրազիլիա	0.3	5.1	4.9		Բելգիա	0.0	7.5	7.5
Կիպրոս	0.3	6.6	6.3		Ֆինլանդիա	0.0	8.6	8.7
Նիգերիա	0.2	3.8	3.5		Նիդեռլանդներ	0.0	8.4	8.4
Լիտվա	0.2	6.2	5.9		Իսպանիա	0.0	6.8	6.8
Սերբիա	0.2	3.9	3.7		Մարոկո	0.0	5.1	5.1
Բոթսվանա	0.2	6.0	5.8		Գվատեմալա	0.0	4.3	4.3
Մոլդովա	0.2	4.4	4.1		Շրի Լանկա	0.0	4.6	4.7
Եթովպիա	0.2	4.0	3.8		Ճապոնիա	0.0	7.6	7.6
Կատար	0.2	6.8	6.6		Սլովենիա	0.0	5.6	5.6
Մավրիտիուս	0.2	5.9	5.7		Չադ	0.0	3.2	3.3
Բահրեյն	0.2	6.2	6.0		Մոզամբիկ	-0.1	4.2	4.2
Ղազախստան	0.2	4.3	4.1		Խորվաթիա	-0.1	4.9	5.0
Լեհաստան	0.2	5.5	5.4		Մալի	-0.1	4.7	4.8
ԱՄՆ	0.2	7.9	7.8		Հունաստան	-0.1	5.9	6.0
Հորդանան	0.2	6.1	5.9		Թուրքիա	-0.1	5.2	5.3
Չեխիա	0.1	6.2	6.1		Թունիս	-0.1	5.9	6.0
Ղրղզստան	0.1	4.1	4.0		Նոր Զելանդիա	-0.1	8.3	8.4
Հայաստան	0.1	3.8	3.7		Շվեյցարիա	-0.1	8.3	8.4
Բուլղարիա	0.1	5.2	5.1		Էլ Սալվադոր	-0.1	4.8	4.8
Հոնդուրաս	0.1	4.6	4.5		Բենին	-0.1	4.6	4.7
Սինգապուր	0.1	8.2	8.1		Վենեսուելա	-0.1	3.2	3.3
ԱՄԷ	0.1	7.1	6.9		Էկվադոր	-0.1	3.9	4.0
Վիետնամ	0.1	4.5	4.4		Հունգարիա	-0.1	6.5	6.6
Ռուսաստան	0.1	4.3	4.2		Ուկրաինա	-0.1	4.1	4.3
Պերու	0.1	4.3	4.2		Պաղեստին	-0.1	3.9	4.0
Քուվեյթ	0.1	5.8	5.7		Դոմինիկյան Հանրապետություն	-0.1	4.4	4.5
Ուրուգվայ	0.1	5.7	5.6		Պորտուգալիա	-0.1	7.0	7.1
Հոնկոնգ	0.1	7.5	7.4		Մեքսիկա	-0.2	4.7	4.9

Երկրները	Փոփոխությունը	ՍԻՍԻ 2010թ.	ՍԻՍԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՍԻՍԻ 2010թ.	ՍԻՍԻ 2009թ.
Կոլումբիա	0.1	5.0	4.9		Բոլիվիա	-0.2	3.4	3.6
Տրինիդադ և Տոբագո	0.1	5.2	5.1		Հնդկաստան	-0.2	5.5	5.7
Քենիա	0.1	4.3	4.2		Չիլի	-0.2	6.4	6.6
Կանադա	0.1	8.2	7.9		Հարավային Կորեա	-0.2	6.8	6.9
Գվիանա	0.1	3.9	3.8		Իտալիա	-0.2	6.0	6.2
Պանամա	0.1	5.4	5.3		Գերմանիա	-0.2	8.0	8.2
Լյուքսեմբուրգ	0.1	8.1	8.0		Իսրայել	-0.2	6.3	6.6
Ավստրալիա	0.1	8.2	8.1		Թաիլանդ	-0.2	5.2	5.4
Բուրունդի	0.1	3.3	3.2		Իսլանդիա	-0.3	7.8	8.1
Նեպալ	0.1	4.0	4.0		Մալայզիա	-0.3	6.1	6.3
Էստոնիա	0.1	6.7	6.6		Ալժիր	-0.3	3.7	4.0
Ֆրանսիա	0.1	7.2	7.1		Մավրիտանիա	-0.4	4.4	4.8
Լատվիա	0.1	5.4	5.4		Բրունեյ	-	4.3	-
Սլովակիա	0.0	6.4	6.3		Վրաստան	-	3.7	-
Թայվան	0.0	6.8	6.7		Գվիանա	-	5.2	-
Մալթա	0.0	6.6	6.6		Փղոսկրե ափ	-	3.1	-
Յամայկա	0.0	5.3	5.3		Լիբիա	-	3.7	-
Պարագվայ	0.0	3.5	3.5		Մալավի	-	4.7	-
Ավստրիա	0.0	8.2	8.1		Օման	-	6.5	-
Մադագասկար	0.0	4.3	4.2		Պուերտո Ռիկո	-	6.3	-
Հարավային Աֆրիկա	0.0	6.8	6.8		Սաուդյան Արաբիա	-	6.1	-
Կոստա Ռիկա	0.0	5.7	5.7		Սենեգալ	-	4.2	-
Նորվեգիա	0.0	8.3	8.3		Սիրիա	-	4.9	-
Ինդոնեզիա	0.0	4.1	4.1		Ուգանդա	-	3.9	-
Միացյալ Թագավորություն	0.0	7.8	7.8		**Միջինը**	**-0.0338**	**5.4520**	**5.4858**

Աղյուսակ 18-ում բերված են ԻՔՄ-ի փոփոխությունները 2009-2010 թվականների ընթացքում: Այս ցուցանիշը նույնպես նվազել է (0.0018 միավորի չափով), ըստ որում, անկում է արձանագրվել 33 երկրներում, 12 երկրների համար հաշվարկներ չեն կատարվել՝ 2009թ. տվյալների բացակայության պատճառով, մնացած երկրներում նկատվել է ԻՔՄ ցուցանիշի աճ:

Աղյուսակ 19-ի տվյալներից հետևում է, որ ՍՖԻ ցուցանիշը 2010թ. 2009-ի համեմատ վատացել է 0.002 միավորով, ըստ որում, 14 երկրում նկատվել է զրոյական փոփոխություն, 36 երկրում նկատվել է անկում, 12 երկրում հաշվարկներ չեն կատարվել՝ 2009թ. տվյալների բացակայության պատճառով, իսկ մնացած երկրներում նկատվել է այդ ցուցանիշի բարելավում: Ի դեպ, Հայաստանում ՍՖԻ-ի մեծությունը 2010թ. 2009թ. համեմատությամբ ավելացել է 0.2 միավորով՝ 5.6-ից հասնելով 5.8 միավորի:

Աղյուսակ 18

ԻՔՄ փոփոխությունները 2009-2010 թվականներին [6, p. 37]

Երկրները	Փոփոխությունը	ԻՔՄ 2010թ.	ԻՔՄ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ԻՔՄ 2010թ.	ԻՔՄ 2009թ.
Մոնտենեգրո	0.8	4.9	4.1		Կամերուն	0.0	3.0	3.0
Բրազիլիա	0.5	4.7	4.2		Ուկրաինա	0.0	3.7	3.7
Ադրբեջան	0.5	3.6	3.2		Էստոնիա	0.0	6.8	6.9
Նիգերիա	0.4	3.1	2.7		Նիկարագուա	0.0	3.0	3.1
Լեհաստան	0.4	5.7	5.3		Էկվադոր	0.0	2.7	2.8
Սերբիա	0.4	4.0	3.6		Լյուքսեմբուրգ	0.0	8.5	8.5
Միացյալ Նահանգներ	0.4	7.5	7.1		Բենին	0.0	4.6	4.6
Ինդոնեզիա	0.4	3.7	3.3		Մալի	0.0	4.4	4.4
Թայվան	0.4	6.3	5.9		Քուվեյթ	0.0	6.3	6.3
Չինաստան	0.3	4.4	4.0		Վենեսուելա	0.0	1.9	2.0
Ղրղզստան	0.3	2.8	2.5		Նոր Զելանդիա	0.0	8.8	8.8
Մակեդոնիա	0.3	4.1	3.8		Գանա	0.0	3.7	3.7
Զամբիա	0.3	4.4	4.1		Ավստրիա	0.0	8.4	8.4
Հոնկոնգ	0.3	8.1	7.8		Կոստա Ռիկա	0.0	6.3	6.3
Մավրիտիուս	0.3	6.6	6.3		Սլովենիա	0.0	6.5	6.6
Կատար	0.3	7.2	7.0		Նեպալ	0.0	3.1	3.2
Կիպրոս	0.3	6.9	6.6		Բելգիա	0.0	7.4	7.4
Ռումինիա	0.3	4.8	4.5		Բոսնիա և Հերցեգովինա	-0.1	3.8	3.9
Պերու	0.3	3.6	3.3		Պորտուգալիա	-0.1	7.1	7.1
Ալբանիա	0.3	3.8	3.6		Ֆինլանդիա	-0.1	8.9	8.9
Սինգապուր	0.3	8.5	8.2		Ճապոնիա	-0.1	7.4	7.4
Բանգլադեշ	0.2	3.0	2.8		Թուրքիա	-0.1	4.7	4.8
Մոլդովա	0.2	3.8	3.6		Տրինիդադ և Տոբագո	-0.1	4.7	4.7
Ղազախստան	0.2	4.0	3.8		Մալթա	-0.1	7.5	7.6
Իսպանիա	0.2	6.3	6.1		Նորվեգիա	-0.1	8.5	8.5
Բահրեյն	0.2	5.7	5.5		Թունիս	-0.1	5.7	5.8
Չեխիա	0.2	6.1	6.0		Մեքսիկա	-0.1	4.0	4.1
Սլովակիա	0.2	5.8	5.6		Պարագվայ	-0.1	2.6	2.8
Կոլումբիա	0.2	3.8	3.7		Քենիա	-0.1	3.0	3.1
Ուրուգվայ	0.2	6.7	6.5		Լատվիա	-0.1	5.6	5.7
Չիլի	0.2	6.8	6.6		Իսրայել	-0.1	5.9	6.0
Ռուսաստան	0.1	3.3	3.1		Արգենտինա	-0.1	3.7	3.8
Եթովպիա	0.1	3.1	3.0		Թաիլանդ	-0.1	4.4	4.5
Հայաստան	0.1	3.8	3.7		Հարավային Կորեա	-0.1	6.1	6.3
Պանամա	0.1	4.3	4.2		Դոմինիկյան Հանրապետ.	-0.1	4.0	4.2
ԱՄԷ	0.1	6.8	6.6		Հնդկաստան	-0.1	4.8	4.9
Ֆիլիպիններ	0.1	3.5	3.3		Շվեյցարիա	-0.1	8.7	8.8
Բուրունդի	0.1	2.5	2.3		Բոլիվիա	-0.2	3.0	3.1

Երկրները	Փոփոխությունը	ԻՔՄ 2010թ.	ԻՔՄ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ԻՔՄ 2010թ.	ԻՔՄ 2009թ.
Ֆրանսիա	0.1	7.2	7.1		Զիմբաբվե	-0.2	1.8	2.0
Մոզամբիկ	0.1	4.2	4.1		Պաղեստին	-0.2	2.5	2.7
Բոթսվանա	0.1	6.9	6.7		Միացյալ Թագավորություն	-0.2	7.8	7.9
Ավստրալիա	0.1	8.5	8.4		Այժիր	-0.2	3.5	3.7
Լիտվա	0.1	5.7	5.6		Մադագասկար	-0.2	4.1	4.3
Գվատեմալա	0.1	3.5	3.4		Չադ	-0.2	1.6	1.8
Բուրկինա Ֆասո	0.1	4.3	4.2		Հարավային Աֆրիկա	-0.2	5.7	6.0
Նիդեռլանդներ	0.1	8.5	8.4		Հունաստան	-0.2	5.6	5.9
Իռլանդիա	0.1	8.3	8.2		Իտալիա	-0.3	5.3	5.6
Մարոկո	0.1	4.5	4.5		Մալայզիա	-0.3	5.7	6.0
Խորվաթիա	0.1	5.1	5.0		Իսլանդիա	-0.5	8.5	9.0
Բուլղարիա	0.1	4.6	4.5		Մավրիտանիա	-0.8	3.3	4.0
Կանադա	0.1	8.4	8.3		Բրունեյ	-	6.3	-
Վիետնամ	0.0	4.4	4.4		Վրաստան	-	3.7	-
Եգիպտոս	0.0	4.7	4.6		Գանա	-	4.9	-
Տանզանիա	0.0	4.6	4.5		Փղոսկրե ափ	-	1.7	-
Յամայկա	0.0	4.6	4.5		Լիբիա	-	4.6	-
Հորդանան	0.0	5.7	5.6		Մալավի	-	5.0	-
Շվեդիա	0.0	8.7	8.7		Օման	-	6.7	-
Հունգարիա	0.0	6.1	6.1		Պուերտո Ռիկո	-	6.2	-
Էլ Սալվադոր	0.0	4.3	4.2		Սաուդյան Արաբիա	-	5.4	-
Գերմանիա	0.0	8.3	8.3		Սենեգալ	-	4.0	-
Հոնդուրաս	0.0	3.6	3.6		Սիրիա	-	3.8	-
Դանիա	0.0	8.7	8.7		Ուգանդա	-	3.6	-
Շրի Լանկա	0.0	4.0	4.0		**Միջինը**	**-0.0018**	**5.1990**	**5.2008**

Աղյուսակ 19

ՍՖԻ փոփոխությունները 2009-2010 թվականներին [6, p. 38]

Երկրները	Փոփոխությունը	ՍՖԻ 2010թ.	ՍՖԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՍՖԻ 2010թ.	ՍՖԻ 2009թ.
Բոսնիա և Հերցեգովինա	1.1	4.4	3.3		Նիկարագուա	0.0	4.3	4.3
Բանգլադեշ	0.9	3.7	2.8		Հունաստան	0.0	6.2	6.2
Զամբիա	0.7	5.8	5.1		ԱՄԷ	0.0	7.7	7.7
Ադրբեջան	0.7	5.7	5.0		ԱՄՆ	0.0	7.8	7.8
Եգիպտոս	0.6	5.7	5.1		Դանիա	0.0	8.3	8.3
Ռումինիա	0.6	5.6	5.0		Սլովենիա	0.0	4.7	4.7
Միացյալ Թագավորություն	0.6	7.7	7.1		Սլովակիա	0.0	7.1	7.1
Մադագասկար	0.5	4.8	4.3		Քուվեյթ	0.0	7.0	7.0
Մոնտենեգրո	0.5	6.2	5.7		Լիտվա	0.0	6.9	6.9

Երկրները	Փոփոխությունը	ՍՖԻ 2010թ.	ՍՖԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՍՖԻ 2010թ.	ՍՖԻ 2009թ.
Չինաստան	0.4	6.1	5.7		Ֆրանսիա	0.0	6.5	6.5
Բոթսվանա	0.4	6.9	6.5		Չիլի	0.0	7.0	7.0
Կիպրոս	0.4	6.8	6.4		Լեհաստան	0.0	4.8	4.8
Բուլղարիա	0.3	6.0	5.7		Հոնկոնգ	0.0	7.8	7.8
Մակեդոնիա	0.3	5.0	4.7		Շվեդիա	0.0	8.5	8.5
Ալբանիա	0.3	5.2	4.9		Մավրիտանիա	-0.1	5.2	5.3
Մավրիտիուս	0.3	6.4	6.1		Նորվեգիա	-0.1	8.6	8.7
Քենիա	0.3	6.0	5.7		Շրի Լանկա	-0.1	6.0	6.1
Բրազիլիա	0.3	5.4	5.2		Ավստրիա	-0.1	7.8	7.9
Հոնդուրաս	0.3	5.9	5.7		Հունգարիա	-0.1	6.6	6.7
Հարավային Աֆրիկայի Հանր.	0.3	7.4	7.1		Դոմինիկյան Հանրապետ.	-0.1	5.2	5.3
Տրինիդադ և Տոբագո	0.3	5.4	5.2		Էլ Սալվադոր	-0.1	6.0	6.1
Պերու	0.2	5.8	5.6		Բենին	-0.1	4.7	4.8
Չեխիա	0.2	6.0	5.7		Շվեյցարիա	-0.1	7.9	8.0
Կանադա	0.2	7.8	7.5		Մալայզիա	-0.1	6.7	6.8
Լյուքսեմբուրգ	0.2	7.8	7.6		Նիդեռլանդներ	-0.1	8.5	8.6
Հայաստան	0.2	5.8	5.6		Մալի	-0.1	5.1	5.2
Եթովպիա	0.2	4.8	4.6		Ֆիլիպիններ	-0.1	5.4	5.5
Հորդանան	0.2	6.9	6.7		Թունիս	-0.1	7.0	7.1
Վիետնամ	0.2	5.7	5.5		Ճապոնիա	-0.1	7.1	7.2
Տանզանիա	0.2	4.9	4.7		Մեքսիկա	-0.1	5.3	5.4
Գվիանա	0.2	5.2	5.0		Էկվադոր	-0.1	4.5	4.6
Ղրղզստան	0.2	5.2	5.0		Հարավային Կորեա	-0.2	7.2	7.4
Ղազախստան	0.2	5.8	5.6		Թաիլանդ	-0.2	6.9	7.1
Արգենտինա	0.2	4.7	4.5		Խորվաթիա	-0.2	5.1	5.3
Մոլդովա	0.2	5.2	5.0		Նոր Զելանդիա	-0.2	8.2	8.4
Մալթա	0.2	6.4	6.2		Պաղեստին	-0.2	5.8	6.0
Կոստա Ռիկա	0.1	6.1	6.0		Ինդոնեզիա	-0.2	5.5	5.7
Բուրկինա Ֆասո	0.1	4.6	4.5		Իռլանդիա	-0.2	7.8	8.0
Կամերուն	0.1	4.6	4.5		Մոզամբիկ	-0.2	4.6	4.8
Ռուսաստան	0.1	5.0	4.9		Վենեսուելա	-0.2	4.4	4.6
Զիմբաբվե	0.1	4.7	4.6		Հնդկաստան	-0.2	6.6	6.8
Սերբիա	0.1	4.8	4.7		Իսպանիա	-0.2	6.9	7.2
Էստոնիա	0.1	7.5	7.4		Թուրքիա	-0.2	6.0	6.2
Կոլումբիա	0.1	5.9	5.8		Բոլիվիա	-0.3	4.0	4.3
Ուրուգվայ	0.1	5.4	5.3		Իտալիա	-0.3	5.7	6.0
Ուկրաինա	0.1	4.8	4.7		Պորտուգալիա	-0.4	6.9	7.3
Պանամա	0.1	6.9	6.8		Իսլանդիա	-0.4	8.1	8.5
Չադ	0.1	4.2	4.1		Ալժիր	-0.4	4.3	4.7
Նիգերիա	0.1	4.5	4.4		Գերմանիա	-0.4	7.5	7.9
Կատար	0.1	7.3	7.2		Իսրայել	-0.5	6.2	6.7
Լատվիա	0.1	6.3	6.2		Բրունեյ	-	3.4	-

Երկրները	Փոփոխությունը	ՍՖԻ 2010թ.	ՍՖԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՍՖԻ 2010թ.	ՍՖԻ 2009թ.
Ֆինլանդիա	0.1	8.6	8.5		Վրաստան	-	5.8	-
Բելգիա	0.1	6.9	6.8		Գանա	-	5.5	-
Սինգապուր	0.1	8.3	8.2		Փղոսկրե ափ	-	4.3	-
Յամայկա	0.1	5.9	5.8		Լիբիա	-	4.0	-
Թայվան	0.1	7.3	7.2		Մալավի	-	5.1	-
Մարոկո	0.1	5.9	5.8		Օման	-	7.6	-
Նեպալ	0.0	5.5	5.5		Պուերտո Ռիկո	-	6.2	-
Գվատեմալա	0.0	5.7	5.7		Սաուդյան Արաբիա	-	7.3	-
Բահրեյն	0.0	7.4	7.4		Սենեգալ	-	4.6	-
Ավստրալիա	0.0	8.1	8.1		Սիրիա	-	6.5	-
Պարագվայ	0.0	4.7	4.7		Ուգանդա	-	3.8	-
Բուրունդի	0.0	4.3	4.3		**Միջինը**	**-0.002**	**6.042**	**6.044**

Աղյուսակ 20

ՄՄԻ փոփոխությունները 2009-2010 թվականներին [6, p. 39]

Երկրները	Փոփոխությունը	ՄՄԻ 2010թ.	ՄՄԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՄՄԻ 2010թ.	ՄՄԻ 2009թ.
Լիտվա	0.7	5.9	5.2		Սլովակիա	0.0	6.2	6.2
Ռումինիա	0.6	5.8	5.2		Նիկարագուա	0.0	3.6	3.6
Մոնտենեգրո	0.5	2.4	1.9		Թունիս	0.0	4.9	4.9
Ադրբեջան	0.5	2.6	2.1		Նոր Զելանդիա	0.0	7.9	7.9
Զամբիա	0.4	3.3	2.9		Բոլիվիա	0.0	3.4	3.4
Քուվեյթ	0.4	4.1	3.7		Շվեդիա	0.0	8.3	8.3
Եգիպտոս	0.4	4.7	4.3		Զիմբաբվե	0.0	3.1	3.1
Չինաստան	0.3	4.8	4.5		Իսպանիա	0.0	7.2	7.2
Բահրեյն	0.3	5.5	5.2		Ֆիլիպիններ	0.0	4.8	4.8
Եթովպիա	0.3	4.0	3.7		Դանիա	0.0	8.5	8.5
Մոլդովա	0.3	4.1	3.8		Վենեսուելա	0.0	3.2	3.2
ԱՄԷ	0.3	6.7	6.3		Կանադա	-0.1	7.9	8.0
Կատար	0.3	5.9	5.6		Արգենտինա	-0.1	4.7	4.8
Ալբանիա	0.2	2.3	2.1		Շրի Լանկա	-0.1	3.9	4.0
Նեպալ	0.2	3.5	3.3		Նիդեռլանդներ	-0.1	8.2	8.3
Սերբիա	0.2	2.8	2.6		Սլովենիա	-0.1	5.5	5.6
Նիգերիա	0.2	3.8	3.6		Իսրայել	-0.1	6.9	7.0
Հորդանան	0.2	5.7	5.5		Մալի	-0.1	4.8	4.9
Բոթսվանա	0.2	4.3	4.1		Ղրղզստան	-0.1	4.4	4.5
Ավստրիա	0.2	8.3	8.1		Բոսնիա և Հերցեգովինա	-0.1	2.7	2.8
Լատվիա	0.2	4.4	4.2		Մոզամբիկ	-0.1	3.8	3.9
Պարագվայ	0.2	3.1	3.0		Կոստա Ռիկա	-0.1	4.7	4.8

Երկրները	Փոփոխությունը	ՄՄԻ 2010թ.	ՄՄԻ 2009թ.		Երկրները	Փոփոխությունը	ՄՄԻ 2010թ.	ՄՄԻ 2009թ.
Կիպրոս	0.2	6.0	5.8		Ֆինլանդիա	-0.1	8.5	8.6
Մակեդոնիա	0.1	3.1	3.0		Բելգիա	-0.1	8.1	8.2
Նորվեգիա	0.1	7.9	7.8		Խորվաթիա	-0.1	4.5	4.6
Վիետնամ	0.1	3.5	3.4		Պերու	-0.1	3.6	3.7
Ղազախստան	0.1	3.1	3.0		Էկվադոր	-0.1	4.4	4.5
Էստոնիա	0.1	5.6	5.5		Հնդկաստան	-0.2	5.3	5.1
Իսլանդիա	0.1	6.9	6.8		Բենին	-0.2	4.7	4.9
ԱՄՆ	0.1	8.5	8.4		Դոմինիկյան Հանրապետ.	-0.2	3.9	4.1
Լեհաստան	0.1	6.1	6.0		Կամերուն	-0.2	3.8	4.0
Ճապոնիա	0.1	8.3	8.2		Ինդոնեզիա	-0.2	3.2	3.4
Ֆրանսիա	0.1	7.9	7.8		Մադագասկար	-0.2	3.9	4.1
Ռուսաստան	0.1	4.6	4.5		Էլ Սալվադոր	-0.2	4.0	4.2
Թուրքիա	0.1	5.0	4.9		Մարոկո	-0.2	4.8	5.0
Հոնդուրաս	0.1	4.2	4.1		Հարավային Կորեա	-0.2	7.0	7.2
Հայաստան	0.1	1.9	1.8		Գվատեմալա	-0.2	3.7	3.9
Տրինիդադ և Տոբագո	0.1	5.6	5.5		Բուրկինա Ֆասո	-0.2	5.0	5.2
Սինգապուր	0.1	7.9	7.8		Տանզանիա	-0.2	4.2	4.4
Քենիա	0.1	4.0	3.9		Գերմանիա	-0.3	8.2	8.5
Ավստրալիա	0.1	8.0	7.9		Մեքսիկա	-0.3	4.9	5.2
Իռլանդիա	0.1	7.9	7.8		Այժիր	-0.3	3.4	3.7
Գվիանա	0.1	2.7	2.6		Թայվան	-0.3	6.7	7.0
Բուրունդի	0.1	3.1	3.0		Հունգարիա	-0.3	6.7	7.0
Չեխիա	0.1	6.6	6.5		Մավրիտանիա	-0.4	4.7	5.1
Հարավային Աֆրիկա	0.0	7.4	7.4		Միացյալ Թագավորություն	-0.4	7.9	8.3
Մալթա	0.0	6.0	6.0		Թաիլանդ	-0.4	4.3	4.7
Հոնկոնգ	0.0	6.7	6.7		Ուկրաինա	-0.4	3.9	4.3
Բուլղարիա	0.0	5.1	5.1		Մալայզիա	-0.4	5.8	6.2
Պորտուգալիա	0.0	7.0	7.0		Չիլի	-0.6	5.4	6.0
Լյուքսեմբուրգ	0.0	8.0	8.0		Բրունեյ	-	3.2	-
Ուրուգվայ	0.0	4.9	4.9		Վրաստան	-	1.8	-
Հունաստան	0.0	6.0	6.0		Գանա	-	5.2	-
Բանգլադեշ	0.0	2.1	2.1		Փղոսկրե ափ	-	3.3	-
Կոլումբիա	0.0	5.3	5.3		Լիբիա	-	2.4	-
Յամայկա	0.0	5.5	5.5		Մալավի	-	3.9	-
Չադ	0.0	3.9	3.9		Օման	-	5.2	-
Բրազիլիա	0.0	5.2	5.2		Պուերտո Ռիկո	-	6.7	-
Պաղեստին	0.0	3.3	3.3		Սաուդյան Արաբիա	-	5.5	-
Իտալիա	0.0	7.1	7.1		Սենեգալ	-	4.1	-
Պանամա	0.0	5.0	5.0		Սիրիա	-	4.5	-
Մավրիտիուս	0.0	4.9	4.9		Ուգանդա	-	4.4	-
Շվեյցարիա	0.0	8.3	8.3		**Միջինը**	**-0.0849**	**5.1310**	**5.2159**

Աղյուսակ 20-ում բերված են ՄՄԻ փոփոխությունները 2009-2010թթ.: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ՄՄԻ-ի մեծությունը 2010թ. 2009թ. համեմատ նվազել է 0.0849 միավորով: Ըստ որում, 29 երկրում նկատվել է զրոյական փոփոխություն, 39 երկրում նկատվել է անկում, 12 երկրում հաշվարկներ չեն կատարվել՝ 2009թ. տվյալների բացակայության պատճառով, իսկ մնացած երկրներում նկատվել է այդ ցուցանիշի բարելավում: Հայաստանում ՄՄԻ-ի մեծությունը 2010թ. 2009թ. համեմատությամբ ավելացել է 0.1 միավորով՝ 1.8-ից հասնելով 1.9 միավորի:

Անդրադառնալով համաշխարհային վարկանիշային ցանկում Հարավային Կովկասի երեք երկրներում սեփականության իրավունքի ինդեքսի մեծությանը՝ նշենք, որ Հայաստանը ՍԻՄԻ ցուցանիշով 109-րդն է 125 երկրների մեջ և 22-րդը՝ տարածաշրջանում [6, p. 78]: Թեև Հայաստանի ՍԻՄԻ բոլոր բաղադրիչների մակարդակներն աճել են, մեր երկրում 2010թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ՍԻՄԻ 0,1 տոկոսանոց աճ: Վերջին տարվա ընթացքում բարելավվել են օրենքի գերակայության և կոռուպցիայի դեմ պայքարի ցուցանիշները: Նկատելիորեն վատացել են քաղաքական կայունության և դատական համակարգի անկախության ցուցանիշները, ինչի արդյունքում իրավական և քաղաքական միջավայրը (ԻՔՄ) բնութագրող ամփոփ բաղադրիչն աննշան է ավելացել:

Սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակը բարդ է, թերևս՝ խճճված: Սեփականության գրանցման ընթացակարգը բնութագրող ցուցանիշը Հայաստանում մնում է լավագույնը՝ 9,4, քանի որ սեփականության գրանցման համար պահանջվում է ընդամենը 4 օր: Թեև 2010թ. 2009թ. համեմատ վարկային միջոցների մատչելիության ցուցանիշն աճել է 0,4 կետով, Հայաստանի համար այս ենթաբաղադրիչը գնահատվում է շատ ցածր՝ ընդամենը 2,1:

Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության հարցում Հայաստանը վերջից երկրորդ տեղն է զբաղեցնում տարածաշրջանում՝ վերջին տեղը թողնելով Վրաստանին: Երկրում վաճառվող թվային կրիչների, համակարգչային ծրագրերի ավելի քան 95 տոկոսը ձեռք է բերվում, բազմացվում և վաճառվում է անօրինական ճանապարհներով: Որպես հետևանք, հեղինակային իրավունքների պաշտպանության մակարդակը բնութագրող ցուցանիշը Հայաստանում երբևէ չի գերազանցել 1,0 սահմանը:

Ադրբեջանը ՍԻՄԻ ցուցանիշով զբաղեցնում է 101-րդ տեղը 125 երկրների շարքում և 20-րդ տեղը՝ տարածաշրջանում [6, p. 80]: Այս երկրում 2010թ. տեղի է ունեցել այդ ցուցանիշի զգալի բարձրացում՝ 0,6 կետով, ընդ որում՝ ԻՔՄ-ն ավելացել է 0,4 կետով: Ադրբեջանում ՍԻՄԻ ցուցանիշի այդպիսի ավելացումը պայմանավորված է ինչպես քաղաքական կայունության, այնպես

էլ դատական համակարգի անկախության մակարդակի բարձրացմամբ: Մասնավորապես, միայն դատական համակարգի անկախության մակարդակը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 1.3 կետով:

Ադրբեջանի սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների (ՍՖԻ) ինդեքսը նույնպես զգալիորեն ավելացել է: Նախորդ տարվա համեմատ զգալիորեն պարզեցվել է սեփականության գրանցման կարգը, մասնավորապես, գրանցման համար անհրաժեշտ ժամանակահատվածը կրճատվել է՝ 61-ից հասնելով 11 օրվա: Սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների պաշտպանության մակարդակը նույնպես ավելացել է՝ 4,5-ից հասնելով 5,4-ի:

Մտավոր սեփականության իրավունքներին վերաբերող բաղադրիչն այս երկրում նույնպես ավելացել է. օրինակ, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճանն ավելացել է 0,9 կետով: Այս ոլորտի ամենաթույլ կողմը, թերևս, հեղինակային իրավունքների պաշտպանվածությունն է, որը մնում է բավական ցածր մակարդակի վրա: Ըստ գնահատականների, երկրում վաճառվող համակարգչային ծրագրերի 90%-ը հեղինակների կողմից արտոնագրված չէ պատճենահանելու և վաճառելու համար: Չնայած մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում առկա այս հիմնախնդիրներին, Ադրբեջանում սեփականության իրավունքի ընդհանրական համաթիվը (ՍԻՄԻ) 2010թ. 2007թ. համեմատ զգալիորեն բարելավվել է:

Վրաստանը ՍԻՄԻ ցուցանիշով զբաղեցնում է 113-րդ տեղն աշխարհում և 24-րդը՝ տարածաշրջանում [6, p. 96]: Վրաստանը ՍԻՄԻ ցուցանիշի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկությունները սկսել է տրամադրել վերջերս, և այս երկրի համար ներկայացված են միայն 2010թ. ցուցանիշները: Իրավական ու քաղաքական միջավայրը բնութագրող ենթաբաղադրիչներից օրենքի ուժը (գերակայությունը) և կոռուպցիայի մակարդակի հսկողությունը բնութագրող ցուցանիշները որոշակիորեն բարձր են դատական համակարգի անկախության և քաղաքական կայունության ցուցանիշներից:

Սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների պաշտպանվածությունը Վրաստանի ՍԻՄԻ ընդհանրական ցուցանիշի լավագույն բաղադրիչն է: Սեփականության գրանցման ընթացակարգի դյուրինությունը բնութագրող Վրաստանի ցուցանիշը հավասար է 9,6-ի, որն աշխարհի մակարդակով լավագույնն է: Այն պահանջում է ընդամենը 2 գործողություն, իսկ սեփականության գրանցումն ավարտվում է 3 օրվա ընթացքում: Թեև սահմանված է գրանցման նման պարզեցված ընթացակարգ, դեռևս տեսանելի հիմնախնդիրներ գոյություն ունեն սեփականության իրավունքների պաշտպանության և օրինականության պարտադիր նորմերն ապահովելու ոլորտում: Նշված հանգամանքները թույլ չեն տալիս սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների պաշտպանության մակարդակը գնահատել 4,4-ից, իսկ վարկի մատչելիությունը՝ 3,4-ից ավելի:

Նշվեց, որ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության աստիճանը Վրաստանում ամենացածրն է տարածաշրջանում: Այս վատագույն բաղադրիչն իր ազդեցությունն ունի նաև Վրաստանի ՍԻՄԻ ընդհանրական ցուցանիշի վրա:

Գծապատկերներ 2-5-ում ներկայացված են Հարավային Կովկասի երեք երկրներում ՍԻՄԻ և դրա բաղադրիչների վերաբերյալ ցուցանիշները:

Գծապատկեր 2

Իրավական և քաղաքական միջավայրը բնութագրող ցուցանիշները Հարավային Կովկասի երկրներում



Գծապատկեր 3

Սեփականության ֆիզիկական (գույքային) իրավունքների պաշտպանությունը բնութագրող ցուցանիշները Հարավային Կովկասի երկրներում



Գծապատկեր 4

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը բնութագրող ցուցանիշները Հարավային Կովկասի երկրներում



Գծապատկեր 5

Սեփականության իրավունքի միջազգային ինդեքսը Հարավային Կովկասի երկրներում



Անհրաժեշտ է հիշատակել երևույթի մի կողմի մասին ևս, որը նշված է *«Economic Freedom of the World. 2010. Annual Report»*-ում [15]: Նկատի ունենք այն կապը, որը գոյություն ունի մի կողմից՝ տնտեսական ազատության և մյուս կողմից՝ իրավական համակարգի և սեփականության իրավունքների պաշտ-

պանության միջև: Դրանց միջև տրամաբանական կապն ակնհայտ է. որքան լավ և ապահով են պաշտպանված սեփականության իրավունքները, այնքան լայն են տնտեսական ազատության շրջանակները և տնտեսվարող սուբյեկտների գործելու հնարավորությունները: Թեև սեփականության իրավունքի պաշտպանությունը չի կարելի նույնացնել տնտեսական ազատության հետ, սակայն այն ծառայում է որպես տնտեսական ազատության կարևորագույն նախադրյալ և բաղկացուցիչ մաս: Այսպիսով, ներկայացված հարաբերակցությունները վկայում են, որ քննարկվող կապերն առնվազն գործում են:

Freedom House-ի տվյալների համաձայն[1], տնտեսապես ազատ երկրներում ինչպես անհատական ազատությունները, այնպես էլ քաղաքական իրավունքները երկու անգամ ավելի լավ են պաշտպանված, քան տնտեսապես ոչ ազատ երկրներում: Անհատական ազատություններին են վերաբերում, օրինակ, տեսակետների արտահայտման ազատությունը և հոգևոր հավատի ազատությունը: Քաղաքական իրավունքների գնահատականն արտահայտում է այս կամ այն երկրի մարդկանց հնարավորությունները՝ մասնակցելու քաղաքական գործընթացներին որոշումներ ընդունելու համար: *Աղյուսակ 21*-ում բերված են տնտեսական ազատության, անհատական ազատությունների և քաղաքական ազատությունների միջև եղած կապը հաստատող տվյալներ:

Աղյուսակ 21

Տնտեսական ազատության, անհատական ազատությունների և քաղաքական ազատությունների միջև եղած կապը

Ըստ տնտեսական ազատության ինդեքսի կարգը	**Անհատական ազատությունների գնահատականը**	**Քաղաքական ազատությունների գնահատականը**
Լավագույն քվարթիլ	1.7	1.9
Երկրորդ քվարթիլ	2.3	2.0
Երրորդ քվարթիլ	3.3	3.4
Վատագույն քվարթիլ	4.1	4.4

Աղբյուրը՝ *Economic Freedom of the World, 2008. Annual Report. P. 21.* http://www.freetheworld.com/2008/EFN-2008ch1.pdf. *Freedom House* ոչ կառավարական կազմակերպության գնահատումն իրականացվում է 1-ից մինչև 7 սանդղակ, ըստ որում՝ «1»-ը լավագույն, իսկ «7»-ը՝ վատագույն ցուցանիշն է:

Մեկ այլ հետազոտության արդյունքում պարզվել է նաև տնտեսական ազատության և քաղաքական իրավունքների (օրինակ, ազատ և արդար ընտրությունները) և քաղաքացիական ազատությունների (օրինակ, խոսքի ազատություն) միջև եղած կապը (տե՛ս *Գծապատկեր 6*): Ըստ որում, քաղաքական

[1] *Freedom House*-ը (Ազատության տուն) ոչ կառավարական կազմակերպություն է, որի կենտրոնակայանը գտնվում է Վաշինգտոնում: Ստեղծվել է 1947թ. և զբաղվում է, մասնավորապես, քաղաքական և քաղաքացիական ազատությունների իրավիճակների ուսումնասիրություններով:

իրավունքները և քաղաքացիական ազատությունները չափվում են 1-ից մինչև 7 սանդղակով: Ըստ որում, որքան փոքր է այդ ցուցանիշի արժեքը, այնքան մեծ են քաղաքական իրավունքները և քաղաքական ազատությունները:

Գծապատկեր 6

Տնտեսական ազատության և քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների միջև կապը



Աղբյուրը՝ *Economic Freedom of the World, 2010, Annual Report, p. 19.*

Ուսումնասիրվող երևույթի կարևոր կողմերից է սեփականության և պետության փոխհարաբերությունը՝ քաղաքական տարածության մեջ ազատության պաշտպանության տեսանկյունից: Մարդկային քաղաքակրթության անցած ուղին վկայում է, որ մասնավոր սեփականության պաշտպանությունը պետության կարևոր գործառույթներից մեկն է: Ազատության իրավունքի պաշտպանությանը զուգահեռ, դա, թերևս, միակ խնդիրն է, որ ազատական տնտեսագետների կողմից չի վիճարկվում: Հիմնվելով վերը բերված եզրահանգումների վրա՝ կարելի է նույնիսկ որոշակի հիմնավորվածությամբ պնդել, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը, դրա ճիշտ հասկացության սահմաններում, նույնական է ազատության պաշտպանության հասկացությանը: Միևնույն ժամանակ, անհատի ազատության իրավունքը պետք է պաշտպանված լինի նաև պետության ոտնձգություններից: Իսկ դա հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ ազատությունները երաշխավորված են իրավական առումով և ամենից առաջ սահմանադրությամբ:

Սեփականության պաշտպանությունն ամբողջական իրավական նորմերի համախմբի օգնությամբ կրկնակի ավանդ է դնում անհատական ազատությունների պաշտպանության գործի հիմքում՝ սեփականության լայն տարածումը ստեղծում է մեծ անկախություն պետական ազդեցությունից և հանգեցնում է իշխանության ապակենտրոնացման: Պետական ազդեցությունից մեծ անկախություն ասելով հասկանում ենք, եթե պետությունը տիրապետում է ռեսուրսներին ամբողջությամբ կամ դրա մեծ մասին, որոնք անհրաժեշտ են ապրանքների արտադրության համար, այսինքն՝ բոլոր մարդիկ դառնում են պետությունից կախված: Այս դեպքում հատկապես պետական մարմիններն են որոշումներ կայացնում այս կամ այն մարդկանց խմբին ռեսուրսների և ապրանքների բաշխման սկզբունքների վերաբերյալ: Այդպիսի ազդեցությունը կարելի է օգտագործել մարդկանց կյանքի կառավարման համար՝ նրանց գործողությունները գործնականորեն ուղղելով անհրաժեշտ հուն:

Վերոգրյալը վերաբերում է նաև ժողովրդավարական պետությանը: Ըստ որում՝ նկատվում են մյուս խմբերի հաշվին մարդկանց որոշակի խմբերի շահերի իրացման միտումները: Տիպային օրինակ կարող է ծառայել սուբվենցիաների բաշխումը: Պետությունից փող ստացող մարդիկ միավորվում են՝ հասնելու ընդհանուր նպատակի՝ խմբի անդամների համար պոտենցիալ օգուտների ապահովում, այսինքն՝ սուբվենցիաներ ստացողների ցանկությունը շատ մեծ է: Այդ պատճառով էլ նրանք պատրաստ են իրենց շահերի իրացման հետ կապված ծախսերն իրենք կատարել: Նրանց կողմից սուբվենցիաների ստացումը կարող է ազդել ընտրություններին մասնակցելու կամ չմասնակցելու վրա, նրանք, ովքեր վնասներ են կրել, այսինքն՝ վճարողները, իրենց շատ թվաքանակի պատճառով այդ վնասները զգում են զգալիորեն ավելի պակաս: Այդ էֆեկտը հանգեցնում է ռեսուրսների վերաբաշխման գործընթացների մշտական վերարտադրության և սեփականության իրավունքի նկատմամբ նոր ոտնձգությունների երևան գալուն: Հատուկ վտանգ է պարունակում այն իրավիճակը, երբ ավելի ու ավելի շատ մարդիկ են կախվածության մեջ մնում պետության սոցիալական ծրագրերից: Նրանք պետությունից ստանում են իրենց եկամուտները և շատ հաճախ տնօրինում են ոչ զգալի սեփական ռեսուրսներ: Իրավական համակարգին և ժողովրդավարությանը հասցվող վտանգն այն է, որ ընտրությունների ժամանակ որոշումներ կայացնելիս այդ մարդկանց մեծ մասը կողմնորոշվում է բացառապես դեպի այն, թե պետական կարկանդակի որ մասը կստանա: Սեփականության արժեքը, ինչպես նաև ընդհանուր կանոնները, որոնց համաձայն օգտագործվում է սեփականությունը, հետին պլան են մղվում:

Անհատական ազատության միակ երաշխիքը համընդհանուր ճանաչում ստացած կանոններն են և դրանց անշեղ իրականացումը: Այսպիսով, ցանկա-

ցած հասարակությունում, որտեղ ավելի շատ մարդիկ կախվածություն ունեն պետությունից, ազատությունը չի կարող երկար ժամանակ գոյություն ունենալ:

Տնտեսական իշխանության ապակենտրոնացումը ենթադրում է, որ տնտեսական դաշտում ավելի ու ավելի մեծ դեր է կատարում ոչ թե պետությունը, այլ տնտեսվարող սուբյեկտները, իսկ սեփականության ընդհանուր ծավալում պետական բաժնեմասը նվազում է: Իհարկե, այն մարդիկ, որոնք ավելի շատ սեփականություն են տնօրինում, իրենց գործողությունների տարածման տեսանկյունից հնարավորություն են ունենում մեծացնելու այն տնտեսական տարածքը, որտեղ կարող են որոշումներ կայացնել, և որոնց շրջանակներում նրանք հնարավորություն կստանան հետևելու և իրացնելու սեփական շահերը, այլ ոչ թե ուրիշներինը: Նման մոտեցումն իրենց գործողությունների նկատմամբ վստահության և ընդունած որոշումների պատասխանատվության զգացում է առաջացնում և դրանով իսկ ընդունած որոշումները պաշտպանելու երաշխիք ստեղծում:

Տնտեսության ոլորտում մասնավոր սեփականության ավելի մեծ չափերով ընդլայնումը ձեռնտու է նաև հասարակությանը և նրա յուրաքանչյուր անդամին, ով ունի թեկուզ սեփականության փոքր մասնաբաժին: Քաղաքական ոլորտում մասնավոր սեփականության տարածումը և ընդլայնումն առաջ են բերում մտածողության բազմաձևության այլընտրանքներ: Այն հասարակությունում, որտեղ շատ են մասնավոր սեփականատերերը, ավելի ուժեղ են արտահայտվում երկարաժամկետ շահերը, իսկ իրավական անվտանգությունը դառնում է ավելի կարևոր, քան ռեսուրսների և իրավունքների կարճաժամկետ վերաբաշխումները: Երկարաժամկետում դա բերում է երկրի կայունության, ինչը նրա յուրաքանչյուր քաղաքացու, այդ թվում նաև նրանց համար, ովքեր սեփականատեր չեն, կարևոր և էական ձեռքբերում է:

Դեկտեմբեր, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Ազատականության հիմունքները, Եր., Էդիթ Պրինտ, 2008:
2. *Пайпс Р.,* Собственность и свобода, М., Московская школа политических исследований, 2000.
3. *Бетелл Т.,* Собственность и процветание, М., ИРИСЭН, 2008.
4. Universal Declaration of Human Rights, Article 17, http://www.un.org/en/documents/udhr/
5. Working Group on Property Rights. (2008). Empowering the poor through property rights. In Making the law work for everyone. Volume II, United Nations, Development Programme, 25-42. New York: Commission on Legal Empowerment of the Poor.
6. International Property Rights Index, 2010 Report.

7. *Besley, T. & Ghatak, M.* (2009, April 22). Reforming property rights. VoxEU.org. http://www.voxeu.org/index.php?q=node/3484
8. *Branstetter, L. & Saggi, K.* (2009, October). Intellectual property rights, foreign direct investment, and industrial development (NBER Working Paper w15393). Cambridge, MA: The National Bureau of Economic Research, http://www.nber.org/papers/w15393
9. World Bank Institute's 2009 Governance Matters.
10. The World Bank Group's 2009 Doing Business Report, www.doingbusiness.org
11. World Economic Forum's 2008-2009 Global Competitiveness Index, http://gcr.weforum.org
12. Ginarte-Park Index of Patent Rights (2005), www1.american.edu/cas/econ/faculty/park/Web%20Page%20Update%2010-08/IPP%20Data.xls
13. International Intellectual Property Alliance's 2009 Special 301 Report, Sixth Annual BSA and IDC Global Software Piracy Study (2008), www.iipa.com/2009_SPEC301_TOC.htm
14. International Property Rights Index, 2009 Report.
15. Economic Freedom of the World. 2010. Annual Report". James Gwartney, Joshua Hall and Robert Lawson, www.freetheworld.org

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ОСНОВЫ СОБСТВЕННОСТИ

Ашот Маркосян

Резюме

Содержание прав собственности, как и их интерпретация, меняется со временем. Современные тенденции развития института собственности и целого ряда его составляющий изучаются соответствующими организациями, на основе чего и составляются международные индексы прав собственности. Защищенность собственности и возможность полной реализации прав собственности имеют важное значение при оценке социально-экономического, политического развития страны и перспектив ее дальнейшего развития. Данное обстоятельство также принимается во внимание при оценке степени демократии в различных странах. Проблемы становления и развития институтов собственности наиболее отчетливо проявляются в постсоциалистических странах. В то же время они являются приоритетными направлениями реализации национальных программ развития, осуществляемых правительствами данных стран.

В Республике Армения, так же как и в других республиках Южно-Кавказского региона, ситуацию в области становления и реализации прав собственности нельзя считать удовлетворительной. Это особенно касается проблем в области интеллектуальной собственности. На основе всестороннего анализа автор предлагает свое видение проблемы.